

Երևանի Կոմիտասի անվան
պետական կոնսերվատորիա

Yerevan Komitas
State Conservatory

Ереванская государственная
консерватория им.Комитаса



ԵՐԱԺԻՇՏ

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (216)

#12 դեկտեմբեր 2023

Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Մ Ա Ն Ո Ր Ե Վ Ս ՈՒՐ Բ Ծ Ն ՈՒՆ Դ

Ա Ր Ա Մ Խ Ա Չ Ա Տ Ր Յ Ա Ն Ի 1 2 0 - Ա Մ Յ Ա Վ Ը



2

ԼԻԼԻԹ ԱՐՏԵՍՅԱՆ արվեստագիտության թեկնածու
Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ, հոկտեմբերի 14-ին եզրափակվեց
ՀՀ ԳԱՄ կազմակերպած միջազգային գիտաժողովը՝ նվիրված Արամ
Խաչատրյանի ծննդյան 120-ամյա հոբելյանին, կազմակերպիչներ՝ Արվեստի ինստիտուտ, ՀԿՄ և ԵՊԿ

Արվեստագիտության դոկտորներ՝ ԱՆՆԱ ԱՄԱՏՐՅԱՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՉԵՊԱԼԿԿ

Գ
Հ
Տ
Ա
Ժ
Ո
Ղ
Ո
Վ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՌՈՒՄԿՅԱՆ
արվեստագիտության դոկտոր




Հայաստանի
ֆիլհարմոնիկ
նվագախմբի
ելույթը Կառնեգի
հոլում Սերգեյ
Խաչատրյանի
մենակատարմամբ,
դիրիժոր Էդուարդ
Թովչյան

10



Ռուբեն
Սարգսյանի
երաժշտության
հափշտակող
սեսիոնները

4



Ռուբեն Սարգսյան



ՌՈՒՄ ԵՒ

ՌՈՒՄԱՆՍ (Rum & Romance)



Նորույթ համերգային ծրագրի մասնակից երգչուհիները
28. 11. 2023 թ.

5

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ-120 ԱՄՅԱԿԻՆ

1 Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակին նվիրված գիտաժողովը ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի համաֆինանսավորմամբ կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը՝ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի և Հայաստանի կոմպոզիտորների միության հետ համատեղ: Կոնֆերանսի նպատակն էր՝ ներկայացնել խաչատրյանագիտության արդի իրավիճակը, քննության առնել հայ ակադեմիկոս կոմպոզիտորի ստեղծագործական, կատարողական ու երաժշտական-հասարակական գործունեությունը, արժեքները նրա թողած ժառանգությունը, բացահայտել Արամ Խաչատրյանի ստեղծագործության դերը ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային երաժշտության անդաստանում:

Բացման խոսքում Աննա Ասատրյանը նկատեց, որ գիտական միջոցառումը գումարվում է հայ ժողովրդի համար դրամատիկ ժամանակահատվածում: «Վերջին ամիսներին արցախահայությունը գտնվում է շրջափակման մեջ: Մեր ժողովուրդը երկար ժամանակ փորձում է հաղթահարել 44-օրյա պատերազմի աղետալի հետևանքները: Նման պայմաններում խաչատրյանի անձը և նրա՝ լավատեսությամբ և հումանիստական ուղղվածությամբ աչքի ընկնող երաժշտությունը կարող են կարևոր դեր ունենալ մեր ժողովրդի կյանքում: Պատահական չէ, որ 1943 թվականին՝ Հայրենական մեծ պատերազմի դաժան օրերին, երբ ամբողջ եվրոպան ծնկի բերած ֆաշիստական բանակը շարունակում էր իր հաղթարշավը Սովետական Միության տարածքում, կոմպոզիտորն իր 2-րդ Սիմֆոնիան ավարտեց լավատեսական ֆինալով: Նա հավատում էր իր ժողովրդի հաղթանակին: Ու չսխալվեց: Արամ Խաչատրյանը մերժում էր պատերազմը, մերժում էր հումանիզմի բոլոր հակոտնյաները, նա հումանիստ էր: Վստահ լինելով, որ մեր կոնֆերանսի արդյունքները շատ կարևոր հանգրվան կդառնան միջազգային խաչատրյանագիտության ասպարեզում, առհասարակ, երաժշտագիտության մեջ՝ ուզում եմ հավատալ, որ Արամ Խաչատրյանի երաժշտությունը, անձն ու գործը կօգնեն հայ ժողովրդին հաղթահարել իր պատմության այս դժվարին փուլը և թևակոխել լուսավոր ու պայծառ ապագա»:

Ողջունելով գիտաժողովի կազմակերպիչներն, մասնակիցներին և հյուրերին, ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սաղյանը, մասնավորապես, նկատեց. «Աշխարհահռչակ կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ, հասարակական գործիչ, արվեստագիտության դոկտոր Արամ Խաչատրյանը Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի 80-ամյա պատմության ընթացքում միակ երաժիշտ ակադեմիկոսն է: Նա ակադեմիկոս է ընտրվել ուղիղ 60 տարի առաջ՝ 1963 թ. մարտի 9-ին՝ Ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանի նախաձեռնությամբ և առաջարկությամբ:

Այդ օրվանից մինչև կյանքի վերջը Արամ Խաչատրյանը սերտորեն կապված էր Ակադեմիայի, մասնավորապես՝ Արվեստի ինստիտուտի հետ: Եվ պատահական չէ, որ նա ցանկացել է, որպեսզի իր թանգարանը բացվի և գործի Արվեստի ինստիտուտին կից:

Գիտությունների ակադեմիան, մասնավորապես՝ Արվեստի ինստիտուտը, հետագայում իրենց կարևոր ավանդը բերեցին միջազգային խաչատրյանագիտության կայացման ու զարգացման գործում:

Արամ Խաչատրյանի ստեղծագործական գործունեության ուսումնասիրության հարցերին նվիրված ակադեմիական առաջին գիտական նստաշրջանը գումարվեց այս դահլիճում՝ 1974 թ. հոկտեմբերի 22-ին, որին մասնակցում էր հենց ինքը՝ Արամ Խաչատրյանը: ՀՍՄՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի, ՀՍՄՀ ԳԱ արվեստի ինստիտուտի և Հայաստանի կոմպոզիտորների միության կազմակերպած միացյալ գիտական նստաշրջանը համախմբեց համամիութենական երաժշտագիտական մտքի առաջատար ուժերին: 13 զեկուցումներում ներկայացվեց Ա.Խաչատրյանի ստեղծագործությունն ու գործունեությունը, արժևորվեց այն թե՛ որպես ազգային երաժշտության ու մշակույթի երևույթ և թե՛ որպես Անդրկովկասի, Արևելքի սովետական և համամարդկային երաժշտական մշակույթի երևույթ:

Եվ այսօր կրկին, սակայն՝ այս անգամ՝ առանց Արամ Խաչատրյանի, այս դահլիճում հավաքվել են արդի միջազգային արվեստագիտության, մասնավորապես երաժշտագիտության վաստակաշատ ներկայացուցիչներն ու երիտասարդ հետազոտողները:

Կոնֆերանսի ծրագրին ծանոթանալիս ինձ հաճելիորեն զարմացրեց զեկուցումների թեմատիկ ընդգրկումը և բանախոսներն աշխարհագրությունը: 40 մասնակից աշխարհի 3 մայրաքաղաքներից՝ 8 երկրներից: Սա վկայում է այն մա-

սին, որ անցած տարիների ու տասնամյակների ընթացքում աշխարհում ոչ միայն չի նվազում հետաքրքրությունն Արամ Խաչատրյանի հանձարեղ երաժշտության հանդեպ, այլև նրա ստեղծագործական գործունեությունը շարունակում է մնալ հայ և օտարազգի հետազոտողների ուշադրության կենտրոնում:


Զարմանալի զուգադիպությամբ՝ Արամ Խաչատրյանի հորեյլանները միշտ համընկնում են Ակադեմիայի հորեյլանների հետ: 2023 թ. ՀՀ ԳԱԱ-ն բոլորում է իր հիմնադրման 80-ամյակը:

Եվ կարծում եմ, որ ինչպես անցած 80 տարիների ընթացքում, այնպես էլ հետագայում, Ակադեմիան՝ ի դեմ Արվեստի ինստիտուտի, շարունակելու է մնալ հայ արվեստագիտության միակ ու գլխավոր կենտրոնը՝ իր շուրջը հա-


մասնակցում են 17 արտասահմանցի մասնագետներ աշխարհի 8 երկրներից և որի արդյունքները կհարստացնեն հարուստ ծանապարհ անցած և լավ ավանդույթներ ունեցող խաչատրյանագիտությունը:

Տրամաբանական է և ուրախալի, որ կոնֆերանսի նախաձեռնողն ու հիմնական կազմակերպիչը Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան է, մասնավորապես՝ Արվեստի ինստիտուտը: Սակայն ինձ համար կրկնակի հաճելի է, որ այս ծեռնակով Արվեստի ինստիտուտն իր շուրջ է համախմբել Երևանում Արամ Խաչատրյանի ևս երկու շատ հարազատ օջախներին՝ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանին և Հայաստանի կոմպոզիտորների միությանը:

Կոնֆերանսը ներկայացնում է միջազգային խաչատրյանագիտության արդի փուլը, որը, համաձայն Կոնֆերանսի



Գոհար Շահադյան



Կարապետ Ավետյան Լիբանան



ծրագրի, առավել քան տպավորիչ է: Եւ որ հավորում են բոլորիս՝ Արամ Խաչատրյանի

մախմբելով թե՛ գիտական, թե՛ ստեղծագործական և թե՛ կատարողական աշխարհի երևելի ներկայացուցիչներն:

Վստահ եմ, որ եռօրյա գիտաժողովի ընթացքում մեզ սպասում են հետաքրքիր ու բովանդակալից զեկուցումներ և աշխույժ բանավեճեր:

Համոզված եմ նաև, որ Կոնֆերանսի արդյունքները կդառնան կարևոր և նշանակալի ներդրում միջազգային խաչատրյանագիտության ասպարեզում:

Իր ողջույնի խոսքում ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը նշեց. «2023 թվականին ԿԳՄՍ նախարարության իրականացրած մշակութային միջոցառումների շարքում, բնականաբար, հատկապես կարևոր տեղ է զբաղում Արամ Խաչատրյանի երաժշտության հանրահռչակումը: Համաձայն հորեյլանական հանձնաժողովի համապատասխան որոշումների անցած ամիսների ընթացքում հայ երաժիշտները հյուրախաղերով հանդես են եկել աշխարհի տարբեր երկրներում՝ ներկայացնելով կոմպոզիտորի սիմֆոնիկ և կամերային ստեղծագործությունները: Հոկտեմբերյան օրերին նախատեսվում են Օպերային թատրոնի հյուրախաղերը Ֆրանսիայում, որի ընթացքում Փարիզում կներկայացվեն Խաչատրյանի բալետները:

Ինչ խոսք՝ կոմպոզիտորն ապրում է այնքան, որքան հնչում է նրա երաժշտությունը: Կատարվելով ու բեմադրվելով ողջ աշխարհում՝ արդեն վաղուց Արամ Խաչատրյանը դարձել է հայ ժողովրդի երաժշտական այցեքարտերից մեկը, եթե չասենք՝ այցեքարտը:

Կարծում եմ՝ արվեստի, տվյալ դեպքում՝ երաժշտության, մասին խոսելիս անհրաժեշտ է ընդգծել այն կարևոր դերը, որն ունի արվեստագիտությունը, տվյալ դեպքում՝ երաժշտագիտությունը:

Երաժշտագիտությունը և երաժշտագետները չափազանց մեծ նշանակություն են ունեցել Արամ Խաչատրյանի ստեղծագործական ճակատագրում: Նշեն ընդամենը մեկ փաստ՝ կոմպոզիտորի Երկրորդ սիմֆոնիայի վերնագիրը՝ այն է «Զանգերով սիմֆոնիա», պատկանում է հենց երաժշտագետի՝ կոմպոզիտորի մասին ստվարածավալ մենագրության հեղինակ Գեորգի Խուրդիցին: Ի դեպ՝ Սիմֆոնիան, որը Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հասակակիցն է, 2023-ին տոնում է իր ստեղծման 80-ամյա հորեյլանը:

Երաժշտագետ Գեորգի Խուրդիցը մրբորեն նկատեց, թե ինչ կարևոր դրամատուրգիական նշանակություն ունեն Սիմֆոնիայի սկիզբը և ավարտը ազդարարող զանգերը, և այդտեղից էլ ծնվեց վերնագիրը...

Այս տեսակետից չափազանց կարևոր եմ համարում նման ներկայանալի միջազգային գիտական կոնֆերանսի կազմակերպումն ու անցկացումը, որի աշխատանքների

ԱՐԱՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ-120 ԱՄՅԱԿԸ

2

տնօրեն, Հայաստանի կոմպոզիտորների միության երաժշտագիտական մասնաճյուղի ղեկավար Աննա Ասատրյանը (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյանը՝ երաժշտության մեջ ազգային ինքնատիպության հիմնախնդրի մասին», Ե. Ֆ. Գնեսինայի Մեմորիալ թանգարան-բնակարանի տնօրեն Անդրեյ Գապոնովը (Ռուսաստան, Մոսկվա) և Ե. Ֆ. Գնեսինայի Մեմորիալ թանգարան-բնակարանի ֆոնդապահ Աննա Ավդեևան (Ռուսաստան, Մոսկվա)՝ «Հավերժ երախտապարտ Արամ Խաչատրյանից» (Արամ Խաչատրյանը Գնեսինայի տանը)», արվեստագիտության դոկտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ Մարգարիտա Ռուխկյանը (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյանն իր նամակների հայելիում», արվեստագիտության դոկտոր, Սանկտ-Պետերբուրգի Ն. Ա. Ռինսկի-Կորսակովի անվ. պետական կոնսերվատորիայի երաժշտության տեսության ամբիոնի պրոֆեսոր Իգոր Վորոբյովը (Ռուսաստան, Սանկտ-Պետերբուրգ)՝ «Կանտատ-օրատորիալ ժանրը 1930-1950-ականների սովետական երաժշտության մեջ որպես ստալինյան ժամանակի գաղափարառուսկայական պարագիծայի արտացոլում (Արամ Խաչատրյանի և Ալեքսանդր Հարությունյանի ստեղծագործության օրինակով)», արվեստագիտության դոկտոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ Իրինա Ջուրտովան (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյանը և ազգային դաշնամուրի բնույթը» և երաժշտագիտության դոկտոր, Կառլֆանի երաժշտական կենտրոնի պրոֆեսոր Նուրե Մեխրյանը (ԱՄՆ, Նյու-Յորք)՝ «Արամ Խաչատրյան և Աննո Բաբաջանյան. տարբեր սերունդների երկու կոմպոզիտորների հարաբերությունների դիմադրական» գեկուցումները:

Հիագումար միստն ընդմիջվեց Մարգարիտա Ռուխկյանի «Հնչող երաժշտությունը դարաշրջանի կենդանի տարեգրությունն է (1990-2020)» հոդվածների ժողովածուի շնորհանդեսով. աշխատությունը ներկայացրեցին հեղինակն ու ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, խմբավար ու երաժշտագետ Սարինա Ավանդիսյանը:

Հիագումար միստի երեկոյան միստուն (համանախագահներ՝ Արմինե Գրիգորյան, Անդրեյ Գապոնով) Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրեն, դաշնակահար, միջազգային մրցույթների դափնեկիր, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Արմինե Գրիգորյանը (Հայաստան, Երևան) հանդես եկավ «Մանտրոյի տունը: Տուն-թանգարանի և Արամ Խաչատրյանի անվ. տրիոյի հոբելյանական նախագծերը» գեկուցումով:

Արվեստագիտության թեկնածու, դոցենտ, Սանկտ-Պետերբուրգի Ն. Ա. Ռինսկի-Կորսակովի անվ. պետական կոնսերվատորիայի նվագախմբային ֆակուլտետի ղեկան Անդրեյ Իվանովը (Ռուսաստան, Սանկտ-Պետերբուրգ) հանդես եկավ «Արամ Խաչատրյանի թավջութակի ժառանգությունը» գեկուցումով, արվեստագիտության թեկնածու, Սախա Հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ, Մ. Կ. Ամնոսովի անվ. Զյուսիս-Արևելյան ֆեդերալ համալսարանի մշակութաբանության ամբիոնի դոցենտ, Տատյանա Պավլովա-Բորիսովան (Ռուսաստան, Սախա Հանրապետություն (Յակուտիա), Յակուտսկ)՝ «Արամ Խաչատրյանի «Սպարտակ» բալետը յակուտական բեմում», արվեստագիտության թեկնածու, Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ, Սիխայիլ Կոկժակը (Հայաստան, Երևան)՝ «Միկրոկառուցվածքների՝ միաձուլման կամ փոխադարձ դիրքային վերադասավորման ունակությունը Արամ Խաչատրյանի ստեղծագործություններում», արվեստագիտության դոկտոր, Ուֆայի Ջազի Իսմաիլովի անվ. արվեստի պետական ինստիտուտի դոցենտ, Բաշկորտոստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ Գուլնազ Գալիման (Ռուսաստան, Բաշկորտոստանի Հանրապետություն, Ուֆա)՝ «Սալավաթ Յուլաև» կինոկարի համար գրված Արամ Խաչատրյանի երաժշտությունը», արվեստագիտության թեկնածու, դոցենտ, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի կրթության որակի ապահովման բաժնի ղեկավար, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ Նարինե Ավետիսյանը (Հայաստան,

Երևան)՝ «Արամ Խաչատրյանի դաշնամուրային երաժշտությունը XX դարի 60-ական թվականներին», արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, Լատվիայի վաստակավոր արտիստ, Լատվիայի Ի. Կոզակկիչի անվ. ազգային մշակութային ընկերությունների Ասոցիացիայի նախագահ Ռաֆֆի Խարաջանյանը (Լատվիա, Ռիգա)՝ «Արամ Խաչատրյանն իմ հիշողություններում», «Արունենիա-Նիպոն» հայ-ճապոնական գիտամշակութային միության հիմնադիր-նախագահ, տնտեսագիտության թեկնածու, ճապոնագետ-միջազգայնագետ Աննա Վարդանյանը (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյան. մեծանուն Սենսեյը Տերահարայի հուշերում» և արվեստագիտության թեկնածու, Խ. Արովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանի դոցենտ Վյաչեսլավ Եդիգարյանը (Հայաստան, Երևան)՝ «Խաչատրյանական պիանիզմի կայացման ինքնատիպությունը և առանձնահատկությունները» գեկուցումներով:

Կոմֆերանսն իր աշխատանքները շարունակեց հաջորդ օրը: Առաջին միստուն (համանախագահներ՝ Լիլիթ Արտեմյան, Արսեն Համբարձումով) արվեստագիտության թեկնածու, դոցենտ, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Ծովհնար Սովիսյանը (Հայաստան, Երևան) ներկայացրեց «Солнцем его музыки...» (Արամ Խաչատրյան-Էդգար Յովհաննիսյան ստեղծագործական աղբյուրներ)», ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի աշխատակից Դանիել Երաժիշտը (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյանի Սովետական Հայաստանի Պետական հիմնի երաժշտության գաղտնագրությունը և արդիականությունը», դաշնակահար, մանկավարժ, Կալիֆոռնիայի Երաժշտության ուսուցիչների ասոցիացիայի անդամ

ՀՀԽՆ, գեղարվեստական ղեկավար և դիրիժոր Սերգեյ Սմբատյան



Սուսաննա Տարոնցի (ԱՄՆ, Լոս Անջելես)՝ «Արամ Խաչատրյանի «Մանկական ալբոմի» նոր հրատարակության նպատակը և կարևորությունը», երաժշտագետ, «Երաժշտական Հայաստան» ամսագրի հիմնադիր-գլխավոր խմբագիր, Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության անդամ Գոհար Շադոյանը (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյանի արվեստի զարգացիկ մշակությունը երաժշտագիտական մտքի վրա «Երաժշտական Հայաստանի» էջերում», արվեստագիտության թեկնածու, դաշնակահար, միջազգային մրցույթների դափնեկիր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության անդամ Լիլիթ Արտեմյանը (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյանի ստեղծագործության հանրահռչակումը ՀՀ անկախության շրջանում», արվեստագիտության թեկնածու, դոցենտ, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղի տնօրեն Հասմիկ Հարությունյանը (Հայաստան, Գյումրի)՝ «Ավանդական պարը Արամ Խաչատրյանի ստեղծագործական տեսադաշտում», Բեյրութի ֆիլիարմոնիկ նվագախմբի դիրիժոր, Լիբանանյան-Ամերիկյան համալսարանի դասախոս, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտ Կարապետ Ավետյանը (Լիբանան, Բեյրութ)՝ «Արամ Խաչատրյանի ստեղծագործական գործունեության լիբանանյան էջը», Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղի փոխտնօրեն Անի Ասատրյանը (Հայաստան, Գյումրի)՝ «Գեորգի Տիգրանովը Ա. Խաչատրյանի բալետներում հունամիստական գաղափարների արտահայտման մասին» և Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղի դասախոս Նվարդ Եղոյանը (Հայաստան, Գյումրի)՝ «Պրոֆեսոր Մարգարիտա Գաբրիելի Հարությունյանի ներդրումը խաչատրյանագիտության մեջ»:

Նիստի եզրափակիչ մասում ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ռուբեն Հարությունյանը ներկաների հետ կիսվեց Արամ Խաչատրյանի մասին իր արտակարգ հետաքրքիր հուշերով:

Երկրորդ միստուն (համանախագահներ՝ Մարգարիտա Քանալյան, Կարապետ Ավետյան) արվեստագիտության թեկնածու, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող Արսեն Համբարձումովը (Հայաստան, Երևան) ներկայացրեց «Արամ Խաչատրյանի երաժշտության դերը «Պեպո» և «Ջանգելուր» ֆիլմերում» գեկուցումը, իսկ արվեստագիտության դոկտոր, Ռուսաստանի Պետական ակադեմիական Փոքր թատրոնի կից Մ. Ս. Շչեպկինի անվ. բարձրագույն թատերական ուսումնարանի (ինստիտուտի) պրոֆեսոր Գալինա Պոժդայկան (Ռուսաստան, Մոսկվայի մարզ, Կրասնոգորսկ)՝ «Արամ Խաչատրյանի ստեղծագործական սկզբունքները նրա սաների ստեղծագործություններում. Վլադիմիր Պոժդայկի (1946-2009 թթ.) երկերը», արվեստագիտության թեկնածու, դոցենտ, Խ. Արովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանի Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ Սաթենիկ Մելիքյանը (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյանի կերպարը հայ կերպարվեստում», արվեստագիտության թեկնածու, կոմպոզիտոր, երգեհոնահար, միջազգային մրցույթների դափնեկիր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատող, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ Հովհաննես Մանուկյանը (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյանի ինքնատիպ և եզակի սիմֆոնիզմը», ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ, Յուրի Բախշյանի անվ. մանկական ֆիլիարմոնիայի երգչախմբի ղեկավար, հանրային ռադիոընկերության «Արևիկ» մանկապատանական անսամբլի վոկալի մասնագետ Նաիրա Մելիքյանը (Հայաստան, Երևան)՝ «Կոնստանտին Օրբելյան. «Я его люблю как божество», տնտեսագիտության թեկնածու, Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի ավագ գիտաշխատող Լիանա Կարապետյանը (Հայաստան, Երևան)՝ «ՀՀ ազգային բրենդի հետքերով. մշակութային դիվանագիտության զարգացման հեռանկարներն ու Արամ Խաչատրյանը», Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի գիտաշխատող Լիանա Կարապետյանը (Հայաստան, Երևան)՝ «ՀՀ ազգային բրենդի հետքերով. մշակութային դիվանագիտության զարգացման հեռանկարներն ու Արամ Խաչատրյանը», Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի գիտաշխատող Լիանա Կարապետյանը (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյանի գործիքային կոմպոզիտորները» և Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Յելիսե Սարգսյանը (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյանի և

Արա Սևանյանի ստեղծագործական համագործակցությունը» բանախոսությունները:

Կոմֆերանսի եզրափակիչ՝ երրորդ միստուն (համանախագահներ՝ Աննա Ասատրյան, Անդրեյ Իվանով) լսվեցին արվեստագիտության թեկնածու, Ա. Ի. Գերցենի անվ. ռուսաստանյան պետական մանկավարժական համալսարանի երաժշտության, թատրոնի և խորեոգրաֆիայի ինստիտուտի երաժշտական-գործիքային պատրաստման ամբիոնի դոցենտ Նադեժդա Մեդվեդևա (Ռուսաստան, Սանկտ-Պետերբուրգ)՝ «Ռաֆֆի Խարաջանյանի «Խաչատրյանապատումը», երաժշտագետ Նուրե Պողոսյան-Ջալցբուրգի (UWC Maastricht, MA, Նիդերլանդներ, Մասստրիխտ) «Արամ Խաչատրյան. մարդն աշխարհի երաժշտության մեջ (էթնո- բաժնագիտական դիտարկումներ)» և արվեստագիտության թեկնածու, դոցենտ, Սանկտ-Պետերբուրգի Ն. Ա. Ռինսկի-Կորսակովի անվ. պետական կոնսերվատորիայի ազգային երաժշտական մշակույթների պատմության կաբինետի վարիչ Տատյանա Բրոսլավսկայայի (Ռուսաստան, Սանկտ-Պետերբուրգ)՝ «Նյութեր Ա. Ի. Խաչատրյանի հասցեատերերի որոշ նամակներից (համառոտ տարբերակ)՝ լրացված նախկինների կարևոր ձեռքբերումների մասին խորհրդածություններով» բանախոսությունները:

«Արամ Խաչատրյան-120» միջազգային գիտական կոնֆերանսի արդյունքները դարձան կարևոր հանգրվան երաժշտագիտության, մասնավորապես՝ խաչատրյանագիտության ասպարեզում:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն



Ռուբեն Սարգսյանի երաժշտության հափշտակող ժառանգությունը

1 Նոյեմբերի 25-ին Պաշտոնական արվեստի կենտրոնի համերգասրահում տեղի ունեցավ նշանակալից իրադարձություն՝ ՀՀ Պետական մրցանակի դափնեկիր, կոմպոզիտոր Ռուբեն Սարգսյանին (1945-2013 թթ.) նվիրված հիշատակի երեկո: Այն կազմա-

մբազեղ, գլխավորությո չափ գերող ծայնային աշխարհը: Եվ իրոք, Սարգսյանի ստեղծագործություններն ասես հայելու մեջ երևակվող նրա դիմանկար-արտացոլանքն էին: Չափազանց դժվար խնդիր էր դրված երիտասարդ կատարողների առջև. ամեն վայրկյանին մի նոր անակնկալ շո-



Ընտանեկան ալբոմից՝ Իրինա Ջուլտովա, Ռուբեն Սարգսյան և դուստրը՝ Ալիսա Սարգսյան

կերպվել և իրականացվել է Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի Կամերային գործիքային ամբիոնի նախաձեռնությամբ (ամբիոնի վարիչ՝ պրոֆ. Ի. Ս. Բադալյան): Մասնակցեցին Իրինա Բադալյանի և Ջուլիետա Վարդանյանի կամերային անսամբլի դասարանների ուսանողներն ու շրջանավարտները՝ Աստղիկ Դուկասյանը, Դի-

ջադարձ թաքցնող երաժշտական պատումը մեկնաբաններից պահանջում էր քայլել կոմպոզիտորի հետ համընթաց: Իսկ դրա համար քիչ է լինել պարզապես արհեստավարժ: Անհրաժեշտ պայման է լինել Սարգսյանի չափ ազատ՝ ամեն նյութականից վեր, դուրս կաղապարված ձևերից ու երաժշտական մտքի զարգացման կանխատեսելի ընթացքից: Լի-



Ներածական խոսք՝ արվեստագիտության դոկտոր Լիլիթ Երնջակյանի, համերգի կազմակերպիչ՝ Իրինա Բադալյան և դաշնակահարուհի Ջուլիետա Վարդանյան, կոմպոզիտորի տիկինը, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Իրինա Ջուլտովա, մասնակից արտիստ-ուսանողները



Արվեստագիտության դոկտոր, կոմպոզիտորի տիկինը՝ Իրինա Ջուլտովա, դաշնակահարուհի, Կամերային ամբիոնի վարիչ՝ Իրինա Բադալյան, դաշնակահարուհի՝ Ջուլիետա Վարդանյան

բա Փիշդադին, Նարեկ Խառատյանը (դաշնամուր), Էլեն Առաքելյանը, Սվետլանա Լալայանը (ջութակ), Սոնա Թուրաբյանը (ալտ), Անահիտ Շահինյանը, Անդրանիկ Աղաջանյանը (թավջութակ), Ասյա Ջանունցը, Գայանե Ենոքյանը (ֆլեյտա): Հնչեցին բացառապես Սարգսյանի տարբեր ստեղծագործական շրջանների երկերը: Համերգը վարեց երաժշտագետ, ԵՊՀ դոկտոր-պրոֆեսոր Լիլիթ Երնջակյանը:

Միստիկ, անհավատալի մի բան տեղի ունեցավ դալիլի-ծում: Կատարողներն ասես վերստեղծեցին Ռուբեն Սարգսյանի կենդանի կերպարը՝ համերգին ներկա ունկնդրին այդքան հարազատ և... գրեթե անծանոթ: Ամեն ստեղծագործության հետ վառվող մոմերի լույսի նուրբ խաղի ներքո մթնշաղից ավելի ու ավելի ընդգծված ուրվագծով վեր էր հառնում հենց ինքը՝ կոմպոզիտորը, որն իր ինքնատիպ և եզակի գրչով կարծես քննության էր առնում ինչպես նոր սերնդի կատարողներին, նույնչափ էլ իր վաղեմի ընկերներին. արդյոք այսօր, իր անսպասելի շանթահար մահից տաս տարի անց վերջապես կհասկանա՞նք իրեն, կկարողանա՞նք իրապես կարգալ իր գրիչը, բացահայտել սարգսյանական տիեզերքի

չկա...

Հիրավի խիզախություն կարելի է համարել ուսանողական ուժերով այսօրինակ դժվարին ծրագիրն ունկնդրի սրտին ու հոգուն հասցնելը, կոմպոզիտորին նորովի ծանաչելի դարձնելը: Այդ առումով դժվար է գերազանահատել դասախոսների՝ Ի. Բադալյանի և Ջ. Վարդանյանի դերը, որոնք արդյունքում իրենց սաների հետ միասնական ստեղծագործական հաղթանակ գրանցեցին: Այդ երեկո դալիլիծում հավաքված երաժիշտները ու երաժշտասերներն ասես վերագտան Ռուբեն Սարգսյան արվեստագետին և անձին՝ իր ստեղծագործության անկրկնելի մտերմիկ ինտոնացիայով: Եվ ինչպես նշեց դալիլիծում ներկա՝ կոմպոզիտորի այրին, ԵՊՀ պրոֆեսոր, արվեստագիտության դոկտոր Իրինա Ջուլտովան, կատարողներին հաջողվեց հերքել այն տարածված մտայնությունը, թե սերունդները բաժանված են իրարից անանցանելի անդունդով, անհաղթահարելի պատմեշներով և ունակ չեն հասկանալու միմյանց:


Այդ երեկո Ռուբեն Սարգսյանը, որի 78 երկնային տարին լրացավ բառացիորեն մի քանի օր առաջ, նորովի հաստատեց իր տեղը հայ երաժշտության ժամանակակից ներկայակուն:

ԼԻԼԻԹ ԵՐՆՋԱԿՅԱՆ

երաժշտագետ,

արվեստագիտության թեկնածու, դոցենտ, ԵՊՀ Կատարողական արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ

Շառլ Ազնավուրի 100 - ամյա հորեյանի առթիվ (Փարիզ)



Շառլ Ազնավուրի ծննդյան 100 - ամյա հորեյանի առթիվ Փարիզի քաղաքապետարանը, հարգանքի տուրք մատուցելով ֆրանսահայ արվեստագետին և հումանիստին, Ելիսեյան այգիների մի ընդգրկուն հատված վերանվանել է Շառլ Ազնավուրի անունով: Փարիզի կենտրոնում գտնվող այս տարածքը ժամանակավորապես փակ կլինի վերանորոգման ու բարեկարգման աշխատանքների նպատակով և կվերաբացվի հանրության առջև 2024 թվականի գարնանը:

Նյութը քաղված է՝

<https://www.facebook.com/photo?fbid=675822441338521&set=a.502038538716913>

Ռոմ եւ ռոմանս (Rum & Romance)

1

Բախտի բերմամբ, թե պատահմամբ, մոյսերի 28-ին՝ ճիշտ այն օրն ու ժամին, երբ Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տան դահլիճում ընթանում էր ԵՊԿ՝ Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակին նվիրված համերգ-հանդիսությունը, մեկ այլ դահլիճում՝ Առնո Բաբաջանյանի անվ. համերգասրահի ներքնահարկում կայացավ մի բացառիկ իրադարձություն, որը կարծես մնաց խաչատրյանական երաժշտական տոնախմբության ստվերում: Մինչդեռ ամբողջապես ուսա-

գրույցի հրավեր էր, որը ենթադրում է անկաշկանդ մթնոլորտ՝ բուն կրթությունը կամ նրբագեղ զգացմունքայնությամբ խոսելու ամենակարևորի՝ սիրո մասին: Գաղափարի մեխը՝ ռոմանսի ժանրը, ենթադրում է բեմի և ունկնդրի միջև եղած տարածության մաքսիմալ սեղմում, զրեթե զրոյացում, ինչը լիովին համապատասխանում էր Ա. Բաբաջանյան համերգասրահի ներքնահարկի զոդտրիկ դահլիճի խորհրդավոր միջավայրին: Բայց մթնոլորտը պարզ մտերմիկ զրույցից անսպասելի վերաճեց թատերական

վոյանը, Ռիտա Պետրոսյանը, Մելանյա Սիվոլյանը: Նվագակցեցին «Մասնագիտական դաշնամուր» մասնագիտացման (ամբիոնի վարիչ՝ պրոֆ. Կ. Օհանյան) ուսանողներն ու շրջանավարտները՝ Գայանե Արզումանյանը, Լիանա Բարսեղյանը, Նարեկ Խառատյանը, Ռուզաննա Խասապետյանը, Ժաննա Յովհաննիսյանը, Ալեքսանդրա Մնացականյանը, Մարիա



Ռիտա Պետրոսյան



Լիանա Բարսեղյան, Թովմաս Թովմասյան



Արմինե Համբարձումյան



Մելանյա Սիվոլյան



Ժաննա Յովհաննիսյան

նողական ուժերով կազմակերպված նվիրական այդ երեկոն արժանի է հատուկ ուշադրության և խրախուսանքի: Եվ որպես բիզնես նախագիծ, ընդ որում դասական երաժշտության ոլորտում բավականին թանկ մուտքավճարով (5000 դրամ): Տոմսերն ամբողջապես սպառվել էին դեռ նախօրեին՝ երիտասարդ արտիստների համար «SOLD OUT» բաղձալի նշումով: Ուրախալի է, որ նախագիծն իրականացվել է Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի հետ համագործակցությամբ: Տարբեր պատասխանատու օղակների հետ համագործակցելու հմտություններն ու գաղտնիքներն իր ուսանողներին գործնական հարթակում մատուցեց ՀՀ ֆիլհարմոնիայի գլխավոր պրոդյուսեր Արմեն Մանասյանը: Համերգից առաջ հյուրերին առաջարկվեց մեկ զավաթ ռոմ (ինչը ներառված էր տոմսի արժեքի մեջ): Խմիչքը և դասական արվեստը միավորելու գաղափարը գայթակղիչ «փիար» քայլ էր, որն «աշխատեց»՝ երեկոյին առանձնահատուկ հմայք հաղորդելով: Դա մի մտերմիկ երաժշտական

փոքր մոնո-ներկայացումների հեքիաթային շղթայի: Վարպետորեն ձևավորված լուսային էֆեկտներով և աուդիովիզուալ տեսաշարը, որը «խաղում էր» հետին պլանի էկրանին, արտացոլվելով արտիստների դեմքերին և մարմիններին, ասես ներկայացման պարտիտուրի պոլիֆոնիկ

Մուշեղյանը:

Ներածական ուշագրավ խոսքով հանդես եկավ խմբավար Էմմա Հարությունյանը: Երեկոյի նպատակը երաժշտական վառ կերպարների արարումն ու զեղարկեստական գաղափարների բացահայտումն էր, այլ ոչ միայն վոկալ



Ալեքսանդրա Մնացականյան, Կարինե Աղաջանյան



Նարեկ Խառատյան, Մարիամ Նավոյան



Գայանե Արզումանյան, Սիլվա Ավագյան

րում ընդգրկված «Արվեստի մենեջմենթ» առարկայի շրջանակներում (դասախոս՝ Արմեն Մանասյան) կազմակերպվել է անցկացվել է ուսանողների մտադրացմամբ և ուժերով, որպես բիզնես նախագիծ, ընդ որում դասական երաժշտության ոլորտում բավականին թանկ մուտքավճարով (5000 դրամ): Տոմսերն ամբողջապես սպառվել էին դեռ նախօրեին՝ երիտասարդ արտիստների համար «SOLD OUT» բաղձալի նշումով: Ուրախալի է, որ նախագիծն իրականացվել է Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի հետ համագործակցությամբ: Տարբեր պատասխանատու օղակների հետ համագործակցելու հմտություններն ու գաղտնիքներն իր ուսանողներին գործնական հարթակում մատուցեց ՀՀ ֆիլհարմոնիայի գլխավոր պրոդյուսեր Արմեն Մանասյանը: Համերգից առաջ հյուրերին առաջարկվեց մեկ զավաթ ռոմ (ինչը ներառված էր տոմսի արժեքի մեջ): Խմիչքը և դասական արվեստը միավորելու գաղափարը գայթակղիչ «փիար» քայլ էր, որն «աշխատեց»՝ երեկոյին առանձնահատուկ հմայք հաղորդելով: Դա մի մտերմիկ երաժշտական

մի գիծ լինել՝ թրթռում ու ամեն վայրկյան փոփոխվող, լի գունագեղ կամ հակառակը՝ զուսպ գրաֆիկական փոխակերպումներով: Համերգը յուրօրինակ ուղևորություն էր ռոմանսի ժանրի էջերով՝ աշխարհի երկրներով և տարբեր ժամանակաշրջաններով: Հնչեցին Ֆ. Օբրադորսի, Մ. Սանդրովալի, Կ. Դեյուսի, Ա. Դվորժակի, Ֆ. Հուբերտի, Ց. Կյուրի, Ս. Ռախմանինովի, Մ. Միկոլոյի, ինչպես նաև հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ՝ Ա. Սպենդիարյան, Է. Միրզոյան, Ռ. Պետրոսյան, Վ. Մանուկյան, Գ. Զքյան: Բեմում հանդես եկող ԵՊԿ մագիստրոսները, որոնց կազմի ու երկացանկի հարցերում ոչ մի կողմնակի մասնագետ, այդ թվում՝ կուրսի ղեկավարը, չէր միջամտել և նրանք կարողացան ներկայանալ բարձր մակարդակով, իբրև արդեն ձևավորված արտիստներ: Մասնակցեցին ԵՊԿ «Ակադեմիական երգեցողություն» մասնագիտացման (ամբիոնի վարիչ՝ պրոֆ. Գ. Գեղամյան) ուսանողներ՝ Ալինա Ավագյանը, Կարինե Աղաջանյանը, Թովմաս Թովմասյանը, Արմինե Համբարձումյանը, Մարիամ Յովհաննիսյանը, Մարիամ Նա-

գործիքային տեխնիկայի կամ պրոֆեսիոնալիզմի ցուցադրումը, ինչպես հաճախ է պատահում ուսանողական «հաշվետու» համերգներին: Ստեղծագործությունների ազդեցության բարձր հուզական աստիճանը, դերասանական հստակ ու զուսպ խաղը, արտիստների գերող կազմվածքն ու պահվածքը, բեմական հագուստների շքեղությունը և հայ երիտասարդության չնաշխարհիկ գեղեցկությունը...

Այս ամենը հյուրերին մեկ ժամով ասես պոկեց գետնից ու տարավ գեղեցիկի, իմաստության և հաճույքի աշխարհ, ուր ճախրում են կյանքը գովերգող դյուբիչ հոգիները:

ԼԻԼԻԹ ԵՓՐԵՄՅԱՆ

Երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ
ԵՊԿ Կատարողական արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ



Էմմա Հարությունյան



Մարիա Մուշեղյան



Լիանա Բարսեղյան, Մարիամ Յովհաննիսյան

Կայացավ ԵՊԿ հաշվետու համերգը

2023 թվականի դեկտեմբերի 14-ին Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի Ղազարոս Սարյանի անվ. օպերային ստուդիայում տեղի ունեցավ բուհի տարեկան համերգը: Ինչպես ամեն տարի, այս տարի նույնպես համերգն առանձնացավ իր յուրահատուկ ծրագրով, զեղեցիկ երաժշտական համարներով: Երեկոյի ընթացքում ելույթ ունեցան Կոնսերվատորիայի լավագույն ուսանողները՝ դաշնամուրային, նվագախմբային, երգեցողության ֆակուլտետներից, ցույց տալով տարվա ընթացքում կատարած մեծ աշխատանքի արդյունքները:

Համերգի ծրագրի ընտրության մեջ մեծ էր ղեկավար Սոնա Հովհաննիսյանի դերը, ով ամռանը է ներկա եղել դասարանական համերգներին և անաչառությամբ ընտրել էր լավագույն ուսանողներին:

Յուրաքանչյուր կայացած կոնսերվատորիայի այցեքարտերից է ուսանողներից կազմված երգչախումբը, նվագախումբը: Համերգի սկիզբն ազդարարեց Կոնսերվատորիայի Կոնստանդին Սարաջյանի անվան ուսանողական նվագախումբը՝ զեղարվեստական ղեկավար և դիրիժոր Նատալի Գալստյանի ղեկավարությամբ, հնչեց Ղազարոս Սարյանի «Հայաստան» սիմֆոնիկ պաննոյի 1-ին մասը՝ «Գառնի»-ն: Ուսանողները վարպետությամբ մեկնաբանեցին ստեղծագործությունը, լավագույն կերպով հաղորդելով կոմպոզիտորի ստեղծագործական ոճի առանձնահատկությունները, նրբերանգները:

Նվագախմբի ելույթից հետո հանդիսատեսին ողջունեց երաժշտագետ Լիլիթ Մարտիրոսյանը, ներկայացնելով հաջորդ ելույթը: Նվագախմբին միացավ 2-րդ կուրսի ուսանող, թավջութակահար Նարեկ Հեքեթյանը, ում կատարմամբ հնչեց Առնո Բաբաջանյանի «Արիա-Վոկալիզ»-ի փոխադրությունը՝ նվագախմբի և թավջութակի համար:

Հաջորդիվ բեմ բարձրացավ Կոնսերվատորիայի փողային նվագախումբը զեղարվեստական ղեկավար, դիրիժոր Արմեն Պողոսյանի ղեկավարությամբ՝ կատարելով Առնո Բաբաջանյանի «Իմ սիրտը լեռներում է» ներկայացման համար գրված երաժշտությունը: Նշենք, որ թե՛ ուսանողական, թե՛ փողային նվագախմբերը հանդես եկան բարձր կատարողականությամբ:

Այնուհետև, Լիլիթ Մարտիրոսյանը ներկայացրեց Կոնսերվատորիայի պրոֆեսորա-դասախոսական կազմի և ուսանողների տարվա ընթացքում ունեցած հաջողությունները և ձեռքբերումները՝ հրապարակումներ օտարալեզու ամսագրերում, ելույթներ միջազգային գիտաժողովներում, հիշատակեց կազմակերպված համերգների, դասախոսությունների, վարպետության դասերի, համագործակցությունների, կոնֆերանսների, մրցույթների մասին, ներկայացրեց սպասվող տարաբնույթ միջոցառումները: Ցանկալի կլինեք, որ համերգավարի խոսքն ավելի հակիրճ լինեք, առանց վրիպումների, և իհարկե, հանդիսությանը համապատասխան հանդիսավոր կերպով պատշաճ առջգանությամբ:

Դաշնամուրային ֆակուլտետից հանդես եկան 4-րդ կուրսի ուսանող Սուրեն Բաբայանը (ղեկավար՝ պրոֆեսոր Ամեն Մանուկյան)՝ Կատարելով Մորիս Ռավելի «Վալսը»: Ուսանողները հանդես եկան վարպետությամբ՝ ցույցադրելով բարձր կատարողական տեխնիկա:

Հաշվետու համերգի ծրագիրը կազմված էր որոշակի տրամաբանությամբ, այն բազմաթիվ և բազմաժամանակ էր, որտեղ ընդգրկված էին բոլոր ֆակուլտետների ուսանողները, երեկոն հագեցած էր ինչպես ակադեմիական այնպես էլ ջազային համարներով՝ հայկական միջնադարից, մինչև ժամանակակից կոմպոզիտորական արվեստ, ծրագրում ներառված էին ինչպես հայ, այնպես էլ ռուս և եվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործությունները:

Հայ կոմպոզիտորների ստեղծագործություններից հնչեց եղվարդ Բաղդասարյանի «Ռապսոդիա»-ն՝ գրված ջութակի և դաշնամուրի համար: Կատարեց 3-րդ կուրսի ուսանող Արևիկ Վարդանյանը (ղեկավար՝ պրոֆեսոր Էդուարդ Թադևոսյան), ջութակահարուհուն իր նուրբ և անսամբլային կատարյալ զգացողությամբ նվագակցում էր կոնցերտմայստեր Սարիաննա Հայրապետյանը:

Հատկանշական էր 4-րդ կուրսի ուսանող Էրիկ Ալոյանի ելույթը (ղեկավար պրոֆեսոր Արգաս Ոսկանյան), ով կատարեց Գրիգոր Նարեկացու Տաղ Հարության («Սայլ այն իջանկ») ծավալուն ստեղծագործությունը, ինչպես գիտենք *a capella* երգեցողությունը բարդ է, սակայն ուսանողին հաջողվեց արտակարգ հայեցի կատարել ստեղծագործությունը՝ պահպանելով երգի ինտոնացիոն մաքրությունը, միջնադարյան երաժշտաբանաստեղծական արվեստի ճշգրիտ զգացողությունը, որին Էրիկ Ալոյանին օգնում է մաս երգեցողության փորձառությունը մաս եկեղեցու պատերի ներքո:

Հատկանշական էր մաս մագիստրոսականի 2-րդ կուրսի ուսանող Անի Ռուբենյանի կատարումը (ղեկավար՝ ռոգենտ Սամվել Երկմախչյան), ով ներկայացրեց հայ ազգային նվագարանային գործիքներից բլուլը, կատարելով Գրիգոր Նարեկացու «Հավիկ մի պայծառ տեսի» տաղը:

Շարունակելով միջնադարյան թեմատիկան, բայց կոմպոզիտորական արվեստում ժամանակակից երաժշտական

լեզվով և կոմպոզիտորական հնարներով հնչեց Ռուբեն Սարգսյանի «Ներսես Շնորհալի» պոեմը՝ գրված ֆլեյտայի և դաշնամուրի համար, կատարեցին Գայանե Ենոբյանը՝ ֆլեյտա, և Դիբա Փիշդադին՝ դաշնամուր: Ստեղծագործությունն ատոմալ էր, հետաքրքիր էր դաշնամուրի նվագաբաժինը, որտեղ բացի ստեղնաշարերից օգտագործվում էր դաշնամուրի բաց լարերին անմիջականորեն հպման տեխնիկան, այն նվագելու համար նվագակցողը կանգնում էր: Երաժշտությունը համարված խոսքային հատվածների մեջբերմամբ: Գովելի էր, որ պարսիկ ուսանողուհին արտասանում էր XII դարի Մեծ բանաստեղծ Ներսես Շնորհալու «Առավոտ լուստ»-ն, բայց ցանկալի կլինեք, որ խոսքն առավել հստակ արտաբերվեր, ինչն ավելի ամբողջական պատկերացում կտար Շնորհալու բանաստեղծության յուրահատուկ երաժշտականության մասին:

Արևմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններից հնչեցին. Լեյլայի «*Comme autrefois dans la nuit*» Կավալիեյի ժորժ Բիզեի «Մարգարիտ որոնողները» օպերայից, կատարեց մագիստրոսականի 2-րդ կուրսի ուսանող Ռիտա Պետրոսյանը (պրոֆեսոր Ռեբեկա Օջախյանի դասարան), նվագակցում էր Գայանե Թորոսյանը:

Ֆիգարոյի արիան («*Non piu adrai*»), Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի «Ֆիգարոյի ամուսնությունը» օպերայից կատարեց ակադեմիական երգեցողության բաժնի, 2-րդ կուրսի ուսանող Պավել Հայրիյանը (ռոգենտ Ջուլիետա Նազարյանի դասարան), նվագակցում էր Կատարինե Հովսեփյանը: Երիտասարդ երգիչը հնարավորինս կարողացավ փոխանցել Ֆիգարոյի կատակային կերպարն ու դարաշրջանի շունչը:

Ռուս կլասիցիստիկ Իվան Օլենչիկի 8-րդ Կապրիսի «Իսպանական պատկերներ» հատվածի սեփական փոխադրումը

7



Սուրեն Բաբայան



Արևիկ Վարդանյան, նվագակցող՝ Մարիաննա Հայրապետյան



Արամ Գալստյան, Արման Աղաջանյան, Հայկ Ավետիսյան, Էլինա Չոլախյան



ԵՊԿ փողային նվագախումբ, դիրիժոր՝ Արմեն Պողոսյան

Ք.Գյուլկ. «Օրփեոս և Էվրիդիկե»

Օրբես, Ղազարոս Սարյանի անվ. Օպերային ստուդիայի բեմում, կայացավ Ք. Գյուլկի «Օրփեոս և Էվրիդիկե» օպերայի վերաբեմադրությունը, որտեղ որպես դիրիժոր դեկլարացրել էր, աշխարհառջակ ջութակահար Նարեկ Զախանյանը:

Այս ներկայացումը յուրօրինակ էր իր տեսակի մեջ, մի քանի պատճառներով, որոնցից, երևի թե, կարևորն այն է, որ գլխավոր դերերգերով հանդես եկած երիտասարդ տաղանդավոր երգիչներից՝ (Սոֆիա Թումանյան, Վարդան Խաչատրյան, Մերի Մարտիրոսյան, Սիրանուշ Օվսիյան), երկուսի համար, դա փայլուն բեմել էր, իսկ ռեժիսորի օգնական Նարեկ Մելիքսեթյանի համար, մեծ օպերային ներկայացման մեջ, առաջին ու ստացված մասնագիտական փորձ:

Լեփ լեցուն դահլիճի հանդիսատեսի ծափահարությունները, ամենամեծ զնահատականն էր ամբողջ ստեղծագործական կազմի համար, որը սիրով աշխատել էր ներկայացման կայացման գործում:

Երիտասարդ բարիտոն, ԵՊԿ 3-րդ կուրսի ուսանող՝ Վարդան Խաչատրյանը, սիրով կիսվեց իր դերյուրտից ստացված տպավորություններով, պատմեց իր մասնագիտական ուսման և այս ներկայացումից ձեռք բերված փորձի մասին:

Երաժշտական կրթությունն ստացել են Չայնի պահպանման վոկալ երգչախմբային դպրոցում, հետո Չայկովսկու անվ. դպրոց, ԳՀ վաստակավոր արտիստ Միքայել Զովակիմյանի դասարանում: Այժմ սովորում են ԳՀ ժողովրդական արտիստ՝ Բարսեղ Թումանյանի դասարանում:


Չայնի պահպանման դպրոցում սովորելու տարիներին առիթ են ունեցել տարիներ շարունակ հանդես գալու օպերային թատրոնի բեմում, մանկական երգչախմբով, Տոսկա և Կարմեն օպերաներում: Դա մի հաճելի շրջան էր, երբ թատրոնի բեմում էի, այդ տարիքից սկսած: Թատրոնը, բեմն այն տեղն է, որտեղ ես ինքս ինձ հետ մերդաշնակ եմ, դա այն տեղն է, որտեղ ես հանգիստ եմ:

Դեռ չընդունված կոնսերվատորիա, փոքր դերով հանդես են եկել օպերային ստուդիայում, Դոն Պաքուալե ներկայացման մեջ, Նոտարի կերպարով, այնուհետև Ռոսսինիի «Սևիլյացի սափրիչը» օպերայում Ֆիգարոյի և Ռոզինայի տեսարանն են խաղացել, Պապագենո՝ «Կախարդական սրինգը» օպերայում և այդքան սակավ փորձ ունենալով միանգամից մեծ դերերգ՝ Օրփեոս, իմ առաջին լուրջ դերը:

Իսկ ներկայացումից 20 օր առաջ փոքր նվագախմբային կազմով, Սեդրակ Երկանյանի ղեկավարությամբ համերգում երգեցի «Տաղարան» անսամբլի հետ:

Ինչպե՞ս ընտրեցիր երգարվեստը: Ենթագիտակցությունս ինչ աշխատում է, ես հիշում եմ,

որ ինձ գրավել է թատրոնը, և ամենահետաքրքիրն այն է, որ կյանքում օպերային թատրոն կամ դրամատիկ թատրոն չեն գնացել, բայց այդ անվանումը չգիտես որտեղից իմացել եմ և միշտ ծնողներիս ասել են ինձ տարեք օպերային թատրոն: Իհարկե չտարան, և իմ առաջին ներկայացմանը, որպես հանդիսատես, միայնակ գնացի: Իրականում ցանկություն ունեի ի սկզբանե գնալու թատերական ուղղվածությամբ, բայց մայրս ինձ տարավ երաժշտական դպրոց, և ինձ համար շատ օտար ուղղվածությամբ՝ ժողովրդական երգ: Դա իմը չէր և ես միշտ ձգտում էի դասական օպերային երաժշ-



Վարդան Խաչատրյան (Օրփեոսի դերում), Մերի Մարտիրոսյան (Էվրիդիկեի դերում)

տությանը և թատրոնին: Մեկ տարի ժողովրդական ուղղվածությամբ սովորելուց հետո տեղափոխվեցի Չայնի պահպանման վոկալ երգչախմբային դպրոց, ԳՀ վաստակավոր արտիստ, պրոֆեսոր երջանակահիշատակ Միքայել Զովակիմյանի դասարանը: Վեց տարի սովորելուց հետո, շարունակեցի նրա դասարանը հաճախել այդեն Չայկովսկու անվ. դպրոցում: Պետք է նշեմ, որ Չայնի պահպանման դպրոցում հիանալի դաշնամուրային կրթություն ստացա այդ 6 տարիների ընթացքում սիրելի դասախոս Սուսաննա Գևորգյանի

մոտ, նա այնպիսի հիմք դրեց, որ այժմ նոր ստեղծագործություններ սովորելիս ինձ շատ է օգնում գործիքին տիրապետելը: Ընդունվեցի կոնսերվատորիա նորից Դովակիմյանի դասարան, ցավոք 2 տարի անց 2023-ի ապրիլից իր առողջական վիճակը ծանրացավ և ես իմ վոկալ պարապմունքները շարունակեցի ԳՀ ժողովրդական արտիստ, աշխարհառջակ օպերային երգիչ-արտիստ Բարսեղ Թումանյանի մոտ:

Ո՞ր դերերգերի մասին ես երազում, ի՞նչ բեմերին ես՝ ձգտում:

Շատ երազած դերերգեր ունեմ, որոնք վստահ եմ պետք է ես մարմնավորեմ. դրանցից են՝ Ֆիգարո, («Սևիլյացի Սափրիչը»), Բելկորե («Սիրո ըմպելիք»), Ռոդրիգո («Դոն Կառլոս») և այլն, դերերը շատ-շատ են, որոնց մասին երազում եմ:

Երազանքս, նպատակս այն է, որ իմ մասնագիտության մեջ հասնեմ կատարելության, և իհարկե, ունենամ համաշխարհային մեծ կարիերա, որը հնարավորություն կտա կերտելու կերպարներ:

Բեմերը շատ շատ են, որտեղ ցանկություն ունեմ երգելու: Դրանցից են՝ Լա Սկալա, Լոնդոնի Թագավորական թատրոնը, Մետրոպոլիտեն օպերային թատրոնը, Փարիզի, Վիեննայի, Դոնմի...

Ինչպե՞ս է զնահատում քեզ յոջապատող աշխարհը:

Այս աշխարհը, որտեղ ես ծնվել եմ, այս ժամանակաշրջանը, հիանալի է, այն ունի իր լավ և վատ կողմերը, իսկ ինչ մնում է իմ ցանկություններին, ավելի կնախընտրեի ապրել XVIII-XIX դարերում:

Ովքե՞ր են քո մասնագիտական ու կյանքի ուսուցիչները: Կոնսերվատորիայում ուսանում եմ Դասմիկ Զաջագործյանի, Կոնստանտին Սիմոնյանի, Դասմիկ Պապյանի մոտ:

Քանի, որ Դասմիկ Պապյանը հանդիսանում է Օպերային ստուդիայի գեղարվեստական ղեկավարը, հենց իրենից ստացա Օրփեոսի կերպարը մարմնավորելու առաջարկը, որի համար շատ շնորհակալ եմ, դա ինձ համար մեծ փորձառություն էր, կարիերան սկսել այդպիսի բարդ և մեծ դերով:

Բարեբախտաբար իմ կողքին կայացման ճանապարհին կանգնած են մեծ արտիստներ. իրենց ծանրակշիռ խորհուրդներով օգնում են, նաև երիտասարդ օպերային երգիչ Սարգիս Բաժբեուկ-Մելիքյանը, ինչի համար շատ ուրախ եմ և շնորհակալ:

ՎԻԿՏՈՐԻԱ ՓՈՇՈՏՅԱՆ
Օպերային թատրոնի ռեժիսոր

Կայացավ ԵՊԿ հաշվետու համերգը

6

սաքսոֆոնի համար՝ կատարեց մագիստրոսականի 2-րդ կուրսի ուսանող Դավիթ Գրիգորյանը, (պրոֆեսոր Ալեքսանդր Մանուկյանի դասարան):

Հատկանշական էր 1-ին կուրսի ուսանող Զայկ Մարտիրոսյանի ելույթը, ով կատարեց Պյոտր Իլյիչ Չայկովսկու «Ամուրցներ» ստեղծագործությունը ջութակի համար (պրոֆեսոր Արմեն Զարությունյանի դասարան), նվագակցում էր Օվսաննա Ալեքսանյանը: Կատարումը հազեցած էր մեծ հուզականությամբ, Չայկովսկու կյանքի վաղ շրջանին պատկանող այս ստեղծագործության զգացմունքային բնույթը կատարողը լավագույնս հաղորդեց ունկնդրին:

Դնչեց նաև անսամբլային կատարում՝ Քրիստոֆ Վիլիբալդ Գյուլկի «Ամուրի երգը» «Օրփեոս և Էվրիդիկե» օպերայից Սիրանուշ Օվսիյանի (տպարան), Գայանե Ենոբյանի (ֆլեյտա), Մերեդիթ Մովսիսյանի (տավիղ) կատարմամբ (ղեկավար՝ ԵՊԿ Ղ. Սարյանի անվ. օպերային ստուդիայի գեղարվեստական ղեկավար՝ Դասմիկ Պապյան): Անսամբլային այս համարի ընտրությունը շատ հաջող էր: Ուսանողները լավագույն կերպով վերարտադրեցին Գյուլկի օպերայի ոճական առանձնահատկությունները:

Առանձնացող երևույթ է այսօրվա կոմպոզիտորական բաժնի ուսանողների աշխատանքը, որն աչքի է ընկնում կոմպոզիտորական հասունության ուղին բռնած, համաշխարհային նոր երաժշտության լավ իմացությամբ: Համերգի եզրափակող համարներից էր Կոնսերվատորիայի կոմպոզիտորական բաժնի 2-րդ կուրսի ուսանող Արմեն Գևորգյանի «ONEIROPHILIA» ստեղծագործությունը՝ գրված կլամենտի, ջութակի և դաշնամուրի համար (ղեկավար՝ Արամ Զովհաննիսյան), կատարում էին մագիստրոսական 2-րդ կուրսի ուսանող Ավագ Ավագյանը (կլամենտ), 1-ին կուրսի ուսանող Իվան Եսայանը (ջութակ), և 3-րդ կուրսի ուսանող Թերեզա Մարկոսյանը (դաշնամուր): Ստեղծագործությունը ժամանակակից երաժշտության վառ օրինակներից է, որտեղ կիրառված են արդի կոմպոզիտորական հնարաններ (ֆրոլուստո, մուլտիֆոնիկ հնչյուններ, գործիքի կլավանների ձայնը):

Համերգը եզրափակվեց ջազային կատարումներով,



Էրիկ Ալոյան

ջազ քառյակի հետ ելույթ ունեցան 1-ին կուրսի ուսանող Էլինա Չոլխայանը և 4-րդ կուրսի ուսանող Ալինա Զովսեփյանը, հնչեցին Ջորջ Գերշվինի «I got rhythm» և Մաք Գորդոնի «At last» ստեղծագործությունները:

Քառյակի գեղարվեստական ղեկավարը Դավիթ Գյոդակյան է, արտիստները՝ Դավիթ Պետրոսյան (սաքսոֆոն, 2-րդ կուրս), Զայկ Ավետիսյան (դաշնամուր, մագիստրոսականի 2-րդ կուրս), Արման Աղաջանյան (կոնտրաբաս, 1-ին կուրս), Արամ Գալստյան (հարվածային գործիքներ, 4-րդ կուրս):

Երևանի Կոմիտասի անվ. 100-ամյակը թևակոխած կոմ-



Անի Ռուբենյան

սերվատորիան, պահպանելով լավագույն ավանդույթները, այս բարդ ժամանակներում էլ կարողացավ արժանի ներկայանալ այս պատասխանատու համերգին:

ՄԱՐԻՆԵ ԶՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԵՊԿ երաժշտագիտության բաժնի 1-ին կուրս

ԵՊԿ չրզանավարտ Շողակաթ Վարդանյանի «1489» ֆիլմն արժանացել է IDFA-ի գլխավոր մրցանակին

Վավերագրական կինոյի հեղինակավոր կինոփառատոնում, որ տեղի էր ունենում Ամստերդամում նոյեմբերի 8-19-ը, *FIPRESCI Award* մրցանակը, այնուհետև գլխավոր մրցանակն ստացավ Շողակաթ Վարդանյանի «1489» ֆիլմը: Դա Շողակաթի ռեժիսորական դեբյուտն է և իր անձնական պատմության էկրանավորումը: 2020 թ. երկրորդ դարաբաղյան պատերազմի ժամանակ Շողակաթը կորցրել է իր կրտսեր 21-ամյա եղբորը: Կինոքննադատ Անտոն Դոլինը պատմում է այդ հազվագյուտ ֆիլմի մասին, որը հնարավորություն է տալիս ռազմաճակատի տարբեր կողմերի մարդկանց կարեկցել միմյանց:

«1489» համարը 21-ամյա Սողոմոն Վարդանյանի՝ 2020-ի երկրորդ դարաբաղյան պատերազմում անհետ կորած, այնուհետև զոհված ճանաչված զինվորի աճյունի պայմանական նշանն է: Ֆիլմը Սողոմոնի որոնումների, աճյունի ճանաչման և թաղման տանջալից ընթացակարգի մասին նկարել է նրա ավագ քույրը՝ Շողակաթը: Նա երաժշտական կրթություն ունի (ԵՊԿ Վ. Բաբախանյանի դաշնամուրային դասարանի շրջանավարտ. - *Խմբագրական*), ինչպես և նրա դաշնակահար եղբայրը (ավարտել է Պ. Զայկովսկու անվան ՄՄԵԴ, այնուհետև ԵՊԿ 1-ին կուրսի բակալավրականի ուսանող. - *Խմբագրական*): Ռեժիսորական դեբյուտը, որ ստեղծվել է նշանավոր ուսուցիչ Մարինա Ռաբեժնիկայի մասնակցությամբ (նա եղել է կինոնկարի կրեստիվ պրոդյուսերը) փաստացի նկարվել է առանց դրամական միջոցների, սմարթֆոնով, հիմնականում՝ *home video* ժանրով: Կինոնկարի հերոսներն ինքը Շողակաթն ու ծնողներն են:

Ամստերդամում՝ Եվրոպայի ոչ խաղարկային կինոյի ամենախոշոր և հեղինակավոր *IDFA* կինոփառատոնում, «1489»-ին շնորհվեց գլխավոր մրցանակը՝ պոետիկ և ճշգրիտ ձևակերպումով. «Ֆիլմ, որը թափանցող լույսի մեր գործոնություն ունի, տեսանելի է դարձնում թաքուն ցավի առեղծվածներին լանդշաֆտը և անտանելի բացակայությունը շոշափելի մերկայություն է առաջացնում: Կինո, որպես գոյատևման գործիք, որը հնարավորություն է տալիս առերեսվելու այն իրողություններին, որոնք կգերադասեինք չտեսնել: Եվ, վերջապես, կինո, որպես սիրո դրսևորման ամոռաճալի օրինակ»: Դա XXI դարում հայկական ֆիլմերի ստացած ամենանշանակալի պարգևն է:

Արտաքուստ պարզ ու շիտակ՝ «1489»-ն ապշեցուցիչ բարդ խնդիր է լուծում: Վերջին երկու տարիներին, երբ աշխարհը ջլատում են պատերազմներն ու հակամարտությունները, որոնք անլուծելի են թվում, կինեմատոգրաֆը, անգամ վավերագրականը, մեծ դժվարությամբ է համապատասխան լեզու գտնում այդ մասին խոսելու համար: Իսկ երբ գտնում է, միշտ էկրանին ցուցադրված դեպքերն անցկացնում է խոր անձնական փորձառության միջով: Այդ են ցույց տալիս Ուկրաինայի պատերազմի մասին լավագույն ֆիլմերը՝ Մանտաս Կվեդարավիչյուսի «Մարիուպոլիս 2», Վիտալի Մանսկու և Եվգենի Տիտարենկոյի «Արևելյան ճակատ», Մստիսլավ Չեռնովի «20 օր Մարիուպոլում» ժապավենները: Հայ-ադրբեջանական հակամարտության համար նման հնարք, դիտակետ, կինոլեզու մինչ այս ոչ ոքի չէր հաջողվել գտնել: Ահավոր բարդ քաղաքական ու էթնիկական էր թվում ողբերգական իրավիճակը, վերքերը՝ չափազանց թարմ:

Վարդանյանին հաջողվել է:

«1489»-ը ծնվել է ցավից, անաճր վշտի ապրումից, որն օրինականացնում է կինեմատոգրաֆի յուրաքանչյուր մեթոդ՝ թվացյալ ինքնագործ նկարահանումներից հեռախոսով մինչև աճյունի ճանաչման ցնցող կադրերը, որոնք ստիպում են հանդիսատեսին հայացքը չփախցնել էկրանից: Մանիպուլյացիային մոտենալը վտանգավոր է, ֆիլմը կայանում է սահմանագծին՝ պահպանելով զգացմունքների մաքրությունն ու



անկեղծությունը: Ամենից կարևորը դիտողին հաղորդվող ապրումակցման փորձառությունն է, որի համար հեղինակը տարողունակ կերպար է գտել: Նա խուզում է մազերը և տեսախցիկի առջև կանգնում եղբոր լուսանկարի խորապատկերում, կարծես ինքն իրեն «զինվորագրում» է: Եվ հանկարծ աչք ծակելու չափ տեսանելի է դառնում եղբոր ու քրոջ նմանությունը՝ կրճատելով նրանց միջև եղած հեռավորությունը:

Այստեղ հնարավոր չէ խիստ անձնականը զատել համընդհանուրից, հենց դա է անում Վարդանյանի տրանսգրեսիվ ֆիլմն արվեստի գործողությամբ: Միաժամանակ արվեստի՝ նման վերքեր հաղթահարելու բուն ունակությունը կասկածի տակ է դրվում առաջին իսկ կադրերից: Շողակաթի և Սողոմոնի հայրը՝ քանդակագործ և նկարիչ Կամոն, տանջահար ու շվարած, իր որդուն համեմատում է նուրբ նախշերի քանդակման հետ, որը հարմար է տուֆի վրա, բայց հաստատ խափանվում է գրանիտի վրա: Նա շոշափում է խաչքարը հնամենի եկեղեցու մուտքի մոտ և վերապատմում հայկական էպոսը: Սակայն պատկերավոր համակարգն իր գեղեցիկ ընդհանրացումներով փշրվում է բախվելով իրականության կարծր ապարին՝ անպատասխան թողնելով գլխավոր հարցերը. ողջ է արդյոք Սողոմոնը, և եթե ողջ է, ինչո՞ւ որևէ նշան ցույց չի տալիս:

Արխիվային կադրերը նախորդ Ամանորից (Կամոն տուն է բերել մեծ տոնածառ, և Սողոմոնն օգնում է տուն մտցնելու այն լուսամուտից) միանում են ներկայի՝ բավական աղքատ տոնի հետ: Ընտանիքի երեք անդամները խմում են չորորդի վերադարձի համար: Դա նորացման, պահած ցանկությունների, հնարավոր հրաշքների օրն է: «1489»-ը գեղագիտական ոլորտից անցնում է մետաֆիզիկականին՝ աղոթքին, որ հնչում է անհույս ու երկչուտ, սրբապատկերի առջև մարմրող մոմի մթության մեջ: Հրաշքը տեղի չի ունենում: Բայց և Սողոմոնի ոսկորներին, որոնք վերջապես գտնվել են ամիսներ լանջ և հնարավորություն են տվել ճանաչելու նրան ԴՆԹ-ի միջոցով, ծնողները մայում են որպես հրաշագործությամբ ձեռք բերված մասունքների:

«1489»-ի տարածությունն այնպես է կառուցված, որ կերպարների մեկնաբանման կարիք չի զգացվում: Ահա Կամոն և Շողակաթը մեծ ամայի շենքում փորձում են բռնել պատահաբար ներս թռած ճնճղուկը և ապա դուրս են թողնում լուսամուտից: Այդ սովորական արարքի կապը մահվան, ազատագրման և հավիտենական կյանքի թեմաների հետ ծագում են առանց ճիգի, ինքնաբերաբար:

Ավարտին Սողոմոնի գտնված ոսկորների վրա նախ ճեր-

մակ սավան են գցում, այնուհետև պոլիէթիլեն, նաև մի պարկ, դասավորում են դագաղում, վրան՝ նրա արդուկված զինվորական համազգեստը, կարծես որպես անհետացման և վերամարմնավորման պայմանական ակնարկ: Այդ գործընթացը նման է հաշվետվության, թե ինչպես անմիջական և անտանելի փորձությունից աստիճանաբար ձևավորվում է ֆիլմը, որը կարող է հանդիսատեսին հաղորդել ընտանիքի ապրումների թեկուզ մի փոքր մասնիկը: Արդեն փակ դագաղին դակիչով ամրացնում են Հայաստանի դրոշը: Այդպես յուրաքանչյուրիս ամրացնում են ազգային ինքնությանը և համահավաք պատասխանատվությանը, ուզենք, թե չուզենք:

Պատերազմի շիկացած մթնոլորտը երբեմն հնարավորություն չի տալիս կարեկցելու հակառակորդին, իրադարձություններին նայելու նրա աչքերով: «1489»-ը հազվագյուտ դեպք է, երբ կորստյան կսկիծը հասկանալի կլինի դիտողին բարիկադի կամ ռազմաճակատի յուրաքանչյուր կողմից: Թերևս դա առավելագույնն է, ինչ կարող է անել արվեստը նման ժամանակներում:

ԱՆՏՈՆ ԴՈԼԻՆ

<https://ankakh.com/hy/article/143652>

Շողակաթ Վարդանյանի «1489» դեբյուտային ֆիլմն արժանացավ ամենահեղինակավոր փառատոններից մեկի՝ Ամստերդամի միջազգային փաստավավերագրական փառատոնի՝ *IDFA*-ի երկու մրցանակի՝ «Լավագույն ֆիլմ» և կինոքննադատների *FIPRESCI* պարգևներին:

Ֆիլմը 44-օրյա պատերազմի ընթացքում Շողակաթի անհետ կորած եղբոր Սողոմոնի որոնման պատմությունն է, որը նկարահանվել է որոնումներին զուգահեռ:

«Հէի սպասում, որ որևէ մրցանակ կստանամ, առաջին մրցանակն ստանալուց հետո լաց եղա, քանի որ պատերազմի կորուստների վերքը մորից բացվեց: Մրցանակը չգիտակցված ուրախության ալիք էր, ես ուզում էի հասկանալ, թե որ ուրախությունն է սա», – ասում է Շողակաթը:

Պատմում է, որ ֆիլմը նկարելիս իրենից շատ մեծ ճիգ է պահանջվել՝ հաղթահարելու ներքին պատերազմները:

«Ամբողջ ճիգս կենտրոնացած էր իրականությանն ուղիղ նայելու և ֆիքսելու վրա: Ամբողջ ընթացքում, իմ արած աշխատանքն այն էր, որ թույլ տամ նկարածս նյութն ինձ ասի՝ ինչ է պետք իր հետ անել: Ես ինձնից ոչինչ ֆիլմի մեջ չեմ դրել, ու աշխատանքի բարդությունը հենց նրա մեջ էր, որ կարողանամ տարանջատել՝ ինչ է ուզում իմ նկարածս նյութը և ինչ եմ ուզում ես», – ասում է Շողակաթ Վարդանյանը:

Ասում է՝ ֆիլմը քաղաքական է, բայց ֆիլմում հատուկ քաղաքականություն չկա: «Պատմությունն այդ պահին էր տեղի ունենում, և եղբորս հետ կապված ամեն վայրկյան սպասում էի որևէ լուրի, այդ պատճառով ես ստիպված էի անդադար նկարել: Շատ մոտ էի կոտրվելու եզրին, բայց ես պետք է նկարեի»:


Ասում է, որ ուրախության զգացմանն առնչվելը դժվար էր, այն ավելի շատ ցավոտ էր: Ասում է, որ բոլորս մեր հույզերի հետ առերեսվելու և աշխատելու խնդիր ունենք: Եվ բոլոր դրական ու բացասական հույզերը, որ մենք ստանում ենք պիտի ծառայեցնենք ինչ-որ բան ստեղծելուն:

«1489» ֆիլմի հայաստանյան պրեմիերան տեղի կունենա «Ոսկե Ծիրան» միջազգային կինոփառատոնի շրջանակներում:

Պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱՅՈՅԱՆԸ

<https://hy.armradio.am/2023/11/27/1489-%D5%A8%D5%9D-%D6%86%D5%AB%D5%AC%D5%B4-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%A5%D6%80%D5%A1%D5%A6%D5%B4%D5%AB>

Մեկ նկարի պատմություն



Արամ Խաչատրյան, Ուզեիր Հաջիրբեկով, Դմիտրի Շոստակովիչ, Ռայմոնդ Գլիեր, Սերգեյ Պրոկոֆև, Յուրի Շապորին, Դմիտրի Կաբալևսկի, Իվան Զերժինսկի, Մարիան Կովալ, Վանո Մուրադելի, Իվան Զերժինսկի, Սերգեյ Պրոկոֆև, Վանո Մուրադելի, Մոսկվա, 1946 թ.

«Երաժիշտ» ամսաթերթում ստեղծել ենք «Մեկ նկարի պատմություն» էջը, որտեղ հետամուտ ենք վերականգնելու լուսանկարների միջոցով ժամանակագրությունը, փաստավավերագրությունը, պատմական երաժշտական կյանքի անցուղարձը, արձանագրում արվեստագետների կյանքի կարևոր փաստերը և հետաքրքիր դեպքերը:

Սույն նկարի բնագիրը, եթե որևէ ընթերցող ունի իր անձնական արխիվում, խնդրում ենք ուղարկել կամ բերել «ԵՊԿ խմբագրություն», արտատպման համար, հեռ՝ 010 52 39 93+118:

Ռիխարդ Շտրաուս - Ալպիական Սիմֆոնիա

«Գերմանացի հռչակավոր տոհմից վերջինը, հիմնված Դեմոկրի կողմից և շարունակվող Բեթհովենի և Բրամս ի կողմից».

այսպես է բնութագրել Ռիխարդ Շտրաուսին ավստրիացի գրող Ստեֆան Ցվեյգը:

Իրոք որ, Շտրաուսի արվեստը և առաջին հերթին նրա լավագույն սիմֆոնիկ պոեմները, ստեղծված XIX դարի վերջին, կազմում են գերմանական դասական սիմֆոնիզմի եզրափակիչ գլուխներից մեկը: Մալերի հետ մեկտեղ, ով մշակում էր մեծ բազմամաս սիմֆոնիայի ժանրը, Շտրաուսն իր ժամանակի մեծագույն սիմֆոնիստներից էր, ով կարողացավ օրիգինալ և նորովի կերպարանափոխել սիմֆոնիկ պոեմի ժանրը: Այստեղ նա համդես եկավ որպես Լիստի, մասամբ և Բեռլիոզի, ծրագրային սիմֆոնիզմի ժառանգորդ, ինչպես նաև Վագների սիմֆոնիզմի գծի շարունակող հմտորեն կիրառելով վագներյան սիմֆոնիզմի լայտթեմատիկ տեխնիկան:

Ռիխարդ Շտրաուսի ռոմանտիզմը հասկանալի էր, որը տիպական էր այդ դարաշրջանի անցումային շրջանին, երբ եվրոպական ռոմանտիզմի ուղղությունը շատ բաներում սպառել էր իրեն, իսկ նոր ուղղությունները նոր էին սկսում ի հայտ գալ: Հիմնալով շտրաուսյան պոեմների գեղեցկությամբ, իրենց գրավիչ էներգիայով և հարուստ սիմֆոնիզմով, այնուամենայնիվ, շատերը մեղադրում էին նրան, մեկ նատուրալիստական ծայնագրի հանդեպ չափազանցված հետաքրքրության մեջ, մեկ «էկլեկտիզմի» մեջ, որը մասնավորապես երևում է սալոնային-վալսային մեղեդիներին անսպասելի անդրադարձով:

Չգտելով մաքսիմալ վերարտադրել իրական հնչերանգը, Շտրաուսը ոչ մեկ անգամ է անդրադարձել իր ժամանակին բնորոշ համարձակ դիսոնանսային հարմոնիաներին, որը ճանապարհի է բացում դեպի XX դարի ատոմալ երաժշտությունը: Այսպես, Շտրաուսի ուշ ռոմանտիզմի շրջանը միահյուսվում է ժամանակի տարբեր ուղղությունների հետ: Շտրաուս-սիմֆոնիստի համար կարևոր տեղ են զբաղեցնում տեմբրները: Այս ասպարեզում նա ամենախիզախ նորարարներից էր, ով հարստացրել է վագներյան գործիքային գունապնակի նվաճումները: Շտրաուսի նվագախումբը շատ հզոր էր և շքեղ: Նրա նվագախմբի կազմը գերմաստաբային էր, հատկապես մեծացված են փողայինների և հարվածայինների խմբերը:

Շտրաուսի համար գոյություն չունեին «գեղեցիկ» և «ոչ գեղեցիկ» տեմբրներ: Նա ընտրում էր իր անսպառ տեմբրային գունապնակում այն, ինչ հարկավոր էր տվյալ խնդիրը լուծելու համար: Այստեղից էլ այս անսովոր տեմբրների համադրումը (ծայրահեղ բարձր, կամ չափազանց ցածր պղնձյա փողայինների տեմբրեր), ոչ ավանդական հնարքների կիրառումը (պղնձյա փողայինների տրեմոլոներ), հազվադեպ գործածվող գործիքների օգտագործումը, տեմբրների անսովոր համադրությունները և այլն:

«Ալպիական Սիմֆոնիա»...կարծես հենց անվան մեջ ինչ-որ հսկայական և խորհարդավոր մի բան կա: Չնայած, որ Շտրաուսն այն անվանել է սիմֆոնիա, այն իր բովանդակությամբ և ձևով տիպիկ ծրագրային սիմֆոնիկ պոեմ է: Բայց մեզ թվում է, որ զաղափարներով այն շատ ավելի մեծ է, քան ուղղակի սիմֆոնիկ պոեմ և դրա համար էլ Շտրաուսն այն անվանել է սիմֆոնիա: «Ալպիական սիմֆոնիան» Շտրաուսի վերջին սիմֆոնիկ գործն է, որը գրել է 1915-ին:

Լեռան գագաթին բարձրանալու զաղափարի արտացոլումը երաժշտության մեջ նրան գրավել էր դեռ երիտասարդության տարիներին՝ 1878-ին: Առաջին էսքիզները պատկանում են 1900-1902 թվականներին: Ծրագիրը կազմել է ինքը՝ կոմպոզիտորը, որն այդ ժամանակ ապրում էր ալպյան լեռների ստորոտում: Ամբողջովին երաժշտությունը գրված է 1910 թ., սակայն այդ ժամանակ նա սկսեց աշխատել «Իմ առանց սովեր» օպերայի վրա: Այնուհետև 1914 թ. վերադառնալով «Ալպիական սիմֆոնիային»՝ ավարտեց այն 1915 թ. փետրվարի 8-ին:

Մինչև վերջին պահը սիմֆոնիան կոչվել է «Հակաքրիստոս»: «Ալպիական սիմֆոնիա», որը մատնանշում է Ֆ. Նիցշեի համաճանաչ ստեղծագործությունը, ինչը տեղիք է տվել որոշ հետազոտողներին մեկնաբանել այն ոչ միայն որպես գեղատեսիլ տեսարան դեպի Ալպեր բարձրանալիս և իջնելիս, այլ մարդկային կյանքի ելությունը, որն սկսում և ավարտվում է «գիշերով», այսինքն՝ անգոյությամբ:

Ինչպես և իր ստեղծագործությունների մեծ մասում Շտրաուսն այստեղ նույնպես մեծ տեղ է տալիս գործիքավորմանը: Նվագախումբը (նվագագույնը 107 երաժիշտ) ընդգրկում է փողայինների և հարվածայինների ընդլայնված կազմ, ինչպես նաև չելեստա և երգեհոն: Փողայինների կազմում սովորական գործիքների հետ մեկտեղ կիրառվում են հեկկելֆոնը (բարիտոն հորն), 4 վագներյան տուբա, in Es և in C կլառնետներ: Բացի դրանից, եսմաքեմից լսվում են 16 լրացուցիչ փողային գործիքներ: Հարվածա-

յինների կազմում, պատկերավորման նպատակով նա ընդգրկել է քամու մեքենա (եռլիֆոն, windmaschine), ամպրոպային մեքենա (Donnermaschine), կովերի զանգեր (cowbell) և տամ-տամ:

Գիշեր... գիշեր, որտեղ ամեն ինչ նոր պիտի սկսվի, բայց միևնույն ժամանակ կարծես ամեն ինչ վերջանում է... այն կարծես խորհրդանշում է մարդու աշխարհ գալը: (1. *Nacht*/ 1. Գիշեր) Եվ արևածագի հետ հաստատվում է, որ այնուամենայնիվ ամեն ինչ դեռ նոր է սկսվում (2. *Sonnenaufgang*/2. Արևածագ):

Վերելքի սկիզբ՝ թե Ալպերում, և թե կյանքում, որտեղ ամեն ինչ օտար է դեռ, բայց միևնույն ժամանակ հետաքրքիր (3. *Der Anstieg*/3. Վերելքի սկիզբը):

Մուտքն անտառ՝ կարծես մուտքը կյանք: Սկզբում մութ է և անորոշ, այնուհետև սկսում են հասկանալ, թե որտեղ են և տեսնում շատ ու շատ հրաշալիքներ: Այստեղ անցնում է ձևափոխված վերելքի թեման, որը հնչում է ուրիշ երանգով՝ երանելի ու զմայլված (4. *Eintritt in den Wald*/ 4. Մուտքն անտառ):

Այն հանգում է տեսարանին առվակի մոտ (5. *Wanderung neben dem Bache*/ 5. Առվակի մոտ), որը վերելքի թեմայով բերում է մեզ ջրվեժի մոտ (6. *Am Wasserfall*/ 6. Ջրվեժի մոտ):

Այս ամբողջը կարծես տեսիլք լինի (7. *Erscheinung*/ 7. Տեսիլք): Բարձրանալով տեսարան է բացվում դեպի ծաղկող մարգագետիններ: Այստեղ նույնպես ամենուր հնչում է վերելքի սկզբի թեման մեզ հիշեցնելով, որ մենք անընդհատ բարձրանում ենք (8. *Auf blumigen Wiesen*/ 8. Ծաղկող մարգագետիններ) Հասնելով բարձրադիր արոտավայր լսվում է կովերի զանգերի ծայնը, թռչունների ծվլոցը, զգում են նույնիսկ այդ մաքուր ալպյան օդը: Ամբողջ հրաշագեղ բնությունն է դիմավորում մեզ: Այս ամբողջը մի գեղատեսիլ բնության տեսարան է, որը մեզ կտրում է աշխարհից, տանելով անիրական հեռուները (9. *Auf der Alm*/ 9. Բարձրադիր արոտավայրում):

Այս ամենից հետո վերադառնալով իրականություն հանդիպում ենք մացառուտների (10. *Durch Dickicht und Gestrupp aus Irrwegen*/ 10. Թափառում մացառուտներում), որի հետևանքով մենք հայտնվում ենք սառցադաշտի վրա: Այստեղ ինչպես հուշ հնչում է արևածագի թեման, բայց արդեն կերպարանափոխված՝ լրիվ ուրիշ իմաստով, միևնույն (11. *Auf dem Gletscher*/ 11. Սառցադաշտի վրա):

Նույն թեման ֆագոտի մոտ, այնուհետև այլ փողայինների, զգուշացնում են մեզ, որ կարող են լինել վտանգավոր պահեր: Համադրվելով վերելքի թեմայի հետ լարայինների մոտ, իսկ հետո մեղանվագ թավջութակի մոտ՝ միևնույն, այնուհետև անցնելով շեփոթի և այլ գործիքների մոտ, լարայինների տրեմոլոների ֆոնի տակ, այն կարծես մեզ զգուշացնում է վտանգի մասին (12. *Gefahrvolle Augenblicke*/ 12. Վտանգավոր պահեր):

Բայց այս ամենի շնորհիվ մենք վերջապես զագաթին ենք, որտեղից չքնադադույն բնության տեսարան է բացվում ...ալպյան բնապատկեր, որը խոսքերով դժվար է փոխանցել: Այստեղ մշակվում են բոլոր մինչ այս եղած թեմաները (13. *Auf dem Gipfel*/ 13. Լեռան գագաթին, 14. *Vision*/ 14. Ալպյան բնապատկեր): Բայց հանկարծ իջնում է մառախուղը՝ հիշեցնելով մեզ մարդկային կյանքի վերջանալույթյան մասին (15. *Nebel steigen auf*/ 15. Իջնում է մառախուղը): Արևն իր տեղը զիջում է խավարին: Այստեղ հնչում է արևածագի թեման, բայց արդեն ոչ այդ շքեղությամբ, ինչպես այն սկզբում էր, այլ ավելի լիրիկ և ինչ-որ տեղ հուսահատ (16. *Die Sonne verdunstet sich aiiimah Uch*/ 16. Արևն իր տեղը զիջում է խավարին): Այս ամենը հոսում և թափվում է էլեգիական տրամադրությամբ մի ծով:



Դեռևս են մեզ արդեն շատ ծանոթ թեմաներ ուրիշ տրամադրություններով, այդ թվում և արևածագի թեման արդեն շատ հուսահատ և էլեգիկ (17. *Elegie*) 17. էլեգիա):

Ու կարծես հարաբերական անդորր և հանդարտություն է վրա իջնում, բայց որը միևնույն ժամանակ լարված է և կանխագուշակում է ինչ-որ վատ բան: Հանկարծ հնչում է գիշերվա թեման, որն իր հետ լարվածություն է մտցնում (18. *Stille vor dem Sturm*/ 18. Անդորր փոթորկից առաջ): Սկսվում է փոթորիկը: Մի ահավոր տեսարան, որ կարծես հավաքում և տանում է իր հետ ճանապարհին հանդիպող ամեն ինչ: Այստեղ մեկը մյուսի հետևից անցնում են մեզ ծանոթ գրեթե բոլոր թեմաները՝ ձևափոխված, բոլորը այդ փոթորկի ազդեցությամբ: Ալպերից իջնող ճանապարհը շատ փոթորկոտ է: Այն քշելով իջեցնում է մեզ Ալպերից (19. *Gewitter und Sturm, Abstieg*/ 19. Ամպրոպ և փոթորիկ, հետդարձի ճանապարհ): Չնայած այս ահավոր փոթորկին՝ կյանքի մայրամուտին, այնուամենայնիվ տեսնում են ևս մի չքնադադույն տեսարան՝ հենց մայրամուտը իր բոլոր գույներով (20. *Sonnenuntergang*/ 20. Մայրամուտ): Մայրամուտի վերջին կայծերն են, վերջին գույները, վերջին հիշողությունները... ձայները մարում են...Լսվում է երգեհոնը:

Ամբողջը կարծես հուշ լինի մի հեքիաթի, մի կյանքի մասին, որը երբեք հնարավոր չէ մոռանալ: Նորից հնչում է վերելքի թեման, բայց հանդարտ, լայնաշունչ, երանելի: Բայց ժամանակի հետ հասկանում են, որ այս ամենն արդեն հուշեր են ու հնարավոր է, որ դրանք այլևս երբեք չկրկնվեն...(21. *Ausklang*/ 21. Չայները մարում են): Գիշեր...գիշեր, որտեղ ամեն ինչ վերջանում է, բայց թվում է, թե ամեն ինչ դեռ նոր պիտի սկսվի...(22. *Nacht*/ 22. Գիշեր) (*И. Нестев-История зарубежной музыки, выпускной, Москва, “Музыка”, 1988г., стр. 148-152.*):

Ահա այսպես է ավարտվում մարդկային կյանքը նկարագրող այս յուրօրինակ և գեղեցիկ ստեղծագործությունը: Մեր կարծիքով եթե Ռ. Շտրաուսն անգամ միայն այս գործը գրեր, հանճար կհամարվեր:

Ռիխարդ Շտրաուսի «Ալպիական սիմֆոնիա»-ն Հայաստանում առաջին անգամ կատարել է Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը, 2020 թ. փետրվարի 28-ին:

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՍ ՄԵԱՑԱԿԱՆՅԱՆ
ԵՊԿ դաշնամուրային բաժնի
3-րդ կուրսի ուսանողուհի,
ՂԵԿ. ՇՈՒԷՆՆ ԴՅՈՒՆՈՒՆՑ

ԵՐԿ Հորեյանական համերգ «Արամ Խաչատրյան 120»



ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

2023 թ. նոյեմբերի 28-ին Երևանի Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տանը կայացավ համերգ, որը կազմակերպել էր Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիան, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ:

Համերգը տեղի ունեցավ «Արամ Խաչատրյան 120» գլխավոր նախագծի շրջանակներում, որը համերգների, գիտաժողովների շարք էր նվիրված մեծավաստակ կոմպոզիտորի հորեյանին:

Կոնսերվատորիայի ծրագրի առաջին հորեյանական համերգը կայացավ Այնուհետև մարզում՝ Կապանի արվեստի պետական քոլեջի դահլիճում (27.10. 2023):

Կոնսերվատորիայի ուսանողների մասնակցությամբ հնչեցին Ա. Խաչատրյանի ստեղծագործությունները, փոխադրումները, մշակումները:

Հաջորդ համերգը տեղի ունեցավ Շիրակի մարզում ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի ուսանողների և դասախոսների մասնակցությամբ (18. 11. 2023):

Հնչեցին Ա. Խաչատրյանի, Կոմիտասի, Ա. Բաբաջանյանի ստեղծագործությունները:

Այնուհետև, նոյեմբերի 20-ին և 21-ին Հայաստանի բուհերի և երաժշտական քոլեջների ուսանողների մասնակցությամբ տեղի ունեցավ ԵՊԿ ուսանողական գիտաստեղծագործական ընկերության գիտաժողովը:

Առաջին օրը՝ նոյեմբերի 20-ին, ամբիոնը կոնսերվատորիայի հյուրերին էր:

Երկրորդ օրը՝ նոյեմբերի 21-ին, իրենց զեկուցումներով հանդես եկան կոնսերվատորիայի ուսանողները:

Ներկայացվեցին Արամ Խաչատրյանի ստեղծագործություններին նվիրված և այլ թեմաներով զեկուցումներ:

Այս նախագծի ամփոփիչ համերգը տեղի ունեցավ Երևանում Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը:

Ա. Խաչատրյանի երկերը, փոխադրումները, մշակումները և Խաչատրյանին նվիրված ստեղծագործությունները հնչեցին ԵՊԿ-ի և ԵՊԿԳՄ-ի ուսանողների կատարմամբ:

Համերգը բաղկացած էր երկու բաժնից:

Հանդես եկան՝ Արմեն Պուշինյանը, Արևիկ Վարդանյանը, Մերի Շաբաթյանը, Լիլիթ Մարտիրոսյանը, Էդուարդ Խորոզյանը, Թերեզա Մարկոսյանը, Պավել Հայրիյանը, Անդրեյ Կուրբետը, Սուրեն Բաբայանը, Իվան Եսայանը, Աստղիկ Ղարիբյանը, Գուրգեն Մարտիրոսյանը, Վարդան Թորոսյանը, Նարե Սուքիասյանը, Անահիտ Իվանյանը, Անահիտ Շահինյանը, Մեհրաբ Զիաբարին, Էլեն Մամիկոնյանը, Նորայր Մա-



Արմեն Պուշինյան



Էդուարդ Խորոզյան



Անահիտ Իվանյան, Մեհրաբ Զիաբարի, Անահիտ Շահինյան



Կատերինե Հովսեփյան, Պավել Հայրիյան

ղաքյանը, Սառա Հարությունյանը, Հենրի Երկանյանը, Ավագ Ավագյանը, Սվետլանա Լալայանը, Շուշանիկ Ղուկասյանը, Մանե Ավագյանը, Մեսրոպ Մարտիրոսյանը, Վահրամ Գասպարյանը, Էրիկ Առաքելյանը, Սվետլանա Միքայելյանը, Նարե Թորոսյանը, «Ծովաշար» անսամբլը և ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի կամերային նվագախումբը:

Մասնակիցներից յուրաքանչյուրը ներկայացավ Ա. Խաչատրյանի սեփական ընկալումներով և մեկնաբանումներով: Համերգն իր յուրահատուկ, արտահայտիչ ծայնով վարեց երաժշտագետ Օլյա Նուրիջանյանը:

Երեկոն անցավ շատ ջերմ մթնոլորտում: Կատարող և հանդիսատես կապն ակնհայտ դրական և անմիջական էր: Ուսանողները ջանք և եռանդ չխնայեցին Արամ Խաչատրյանի ստեղծագործության շունչը և ոգին հանդիսատեսին փոխանցելու համար:

Համերգին ներկա էին ԵՊԿ ռեկտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, «Հովեր» երգչախմբի հիմնադիր-ղեկավար Սոնա Հովհաննիսյանը, պրոռեկտորները, և պրոֆեսորադասախոսական կազմը՝ վաստակաշատ երաժիշտներ, երաժշտագետներ, կոմպոզիտորներ, դիրիժորներ:

Այս նախագիծը հիմնալի առիթ էր ուսանողների, որպես երաժիշտ-կատարող մասնագիտական կայացման համար, ինչպես նաև հանդիսատեսի համար հրաշալի հնարավորություն՝ Արամ Խաչատրյանի արժեքը և դերը հայ երաժշտավեստում հասկանալու և գնահատելու համար:

ՍՈՒՄԱՆԱ ՄԱՐԶԱՆՅԱՆ
ԵՊԿ երաժշտագիտության բաժնի 1-ին կուրս

ՀԱՖՆ Արամ Խաչատրյան ծննդյան 120- եւ Սերգեյ Ռախմանինովի ծննդյան 150-ամյակների ամերիկյան հյուրախաղերը

1

2023 թվականի նոյեմբերի 15-ին, ԱՄՆ Նյու-Յորքում, Կառնեգի Հոլում (Carnegie Hall), ներկայացրել է *Classic Music TV-ն*, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի համաշխարհային հյուրախաղերը, 2023 թվականը նվիրված է Արամ Խաչատրյանի ծննդյան 120- և Սերգեյ Ռախմանինովի ծննդյան 150- ամյակներին:

Ծրագրում հնչել են՝ Արամ Խաչատրյանի ստեղծագործություններից՝ հատվածներ «Սպարտակ» բալետից, «Էգիմայի վարիացիաներ և բալետատոն», «Սպարտակի և Ֆրիգիայի աղաջուն», «Հաղեսցի աղջիկների պարը» և «Սպարտակի հաղթանակը»: Արամ Խաչատրյանի ջութակի և նվագախմբի Կոնցերտը, որի մենակատարն էր աշխատանքային ջութակահար Սերգեյ Խաչատրյանը:

Համերգին կատարվել է Սերգեյ Ռախմանինովի 2-րդ Սիմֆոնիան:

Ղեկավարում էր ՀԱՖՆ Գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ Էդուարդ Թովչյանը: Այնուհետև նվագախմբի շրջագայությունը շարունակվեց Բոստոնում, նոյեմբերի 21-ին, *Symphony Hall*-ում ծրագրի նույն խորագրի նվիրումով Սպարտակից խաչատրյանական նույն հատվածներն են հնչել, ինչ-որ Կառնեգի հոլի համերգին, իսկ այս համերգին կատարվել է Սերգեյ Ռախմանինովի դաշնամուրի և նվագախմբի 3-րդ Կոնցեր-



Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի համաշխարհային հյուրախաղերը Ա. Խաչատրյանի հետ, Կառնեգի հոլում՝ Նյու-Յորք, ԱՄՆ

տը, տաղանդավոր դաշնակահար Սերգեյ Բաբայանի մեկնաբանմամբ: Նվագախումբն այստեղ էլ կրկին կատարել է Ս. Ռախմանինովի 2-րդ Սիմֆոնիան, իհարկե գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ Էդուարդ Թովչյանի ղեկավարությամբ:

Երկու համերգներն էլ անցել են առավել օտարերկրյա ունկնդրի օվացիաների ներքո և ոչ միայն ցանկալի, այլև պարտադիր կլիներ, որ հայկական պետական մոտեցմամբ գործոնը փաստվեր մեզ համար դժնդակ օրերին, սակայն չի արձանագրվել ղեկավարության աշխատակիցներից և ոչ մեկի ներկայությունը: Այդ մասին իմանում ենք ամերիկյան մեր գործընկեր՝ Վարդան Հակոբյանի հաղորդումներից:

Հյուրախաղերը շարունակվում էին նոյեմբերին՝ Կանադայում և ղեկտեմբերին՝ Իտալիայում:

Նյութը պատրաստեց՝
ԳՐԴԱՐ ՇԱԳՈՅԱՆԸ
և քաղված է հետևյալ կաթից
<https://apo.am/%d5%b0%d5%>

Հովհաննես Չեֆիզյանի ծննդյան 95-ամյակին

«Տիեզերքի անծայրության հետ համեմատած մի փոշու հատիկ էլ չենք, աստղերի համեմատությամբ իմ կյանքն իմ՝ է՝ ակնթարթ: Այդ ակնթարթում էլ պիտի աշխատել մի լուցկի վառել: Եվ հավատալ այդ ակնթարթի հավերժությանը»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻԶՅԱՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ, Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում, ղեկավարելով 23-ին տեղի ունեցավ պետական մրցանակի դափնեկիր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Հայաստանի ազգային հեռուստ, պրոֆեսոր, Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի գեղարվեստական ղեկավար և դիրիժոր Հովհաննես Չեֆիզյանի ծննդյան 95-ամյակին նվիրված համերգը: Հանճարեղ դիրիժորը ծնվել է 1928 թ. դեկտեմբերի 23-ին Ստամբուլում: Ավարտել է Վիեննայի Մյուսիկայի դպրոցի Ստամբուլի մասնաճյուղը, սովորել է *Saint-Michel* (Սեն-Միշել) ֆրանսիական քոլեջում, մասնագիտացել՝ Փարիզի *Ecol normale de Musique* (Էկոլ Նորմալ դը Մյուզիկ) կոնսերվատորիայում՝ Փարիզի օպերային թատրոնի գլխավոր դիրիժոր, պրոֆեսոր Ժան Ֆուրնեի դասարանում: Միաժամանակ սովորել է քիմիական հետազոտական ինստիտուտում՝ ստանալով ինժեներ-քիմիկոսի դիպլոմ: Ավարտել է Ստամբուլի կոնսերվատորիայի ասպիրանտուրան: Հովհաննես Չեֆիզյանը 1961 թ. մրցույթով նշանակվել է Հայաստանի պետական ազգային աղետնական երգչախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր: Համատեղությամբ աշխատում է Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի խմբավարական ամբիոնում՝ որպես գլխավոր խորհրդական: 1982 թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում ԽՍՀՄ-ի բարձրագույն որակավորման համաձայնագրով կողմից: 1982-1987 թթ. համատեղությամբ աշխատել է Ալեքսանդր Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի պետական թատրոնում՝ որպես գեղարվեստական ղեկավար և գլխավոր տնօրեն: Հովհան-



Հովհաննես Չեֆիզյան, Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբ

նես Չեֆիզյանի ղեկավարությամբ Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբը բազմաթիվ ելույթներ է ունեցել մշակութային խոշոր կենտրոններում՝ Նյու-Յորքում, Փարիզում, Լոնդոնում, Մոսկվայում, Սանկտ-Պետերբուրգում, և այլն, ընդհանուր առմամբ՝ 184 քաղաք: Չեֆիզյանը ղեկավարել է 67 սիմֆոնիկ նվագախումբ:

Նրա ղեկավարությամբ խորհրդային «Մելոդիա» ընկերությունը թողարկել է բազմաթիվ ծայրասկավառակներ՝ Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախմբի և ԽՍՀՄ առաջնակարգ սիմֆոնիկ նվագախմբերի կատարմամբ: Դրանցից մեկը 1978 թ. Փարիզում շահել է *Grand Prix* մրցանակ:

Հովհաննես Չեֆիզյանին շնորհվել են բազմաթիվ մեդալներ, կոչումներ, պարգևներ և շնորհակալագրեր: Պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշ», Ժողովուրդների բարեկամություն», «Մեսրոպ Մաշտոց», «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ», «Աղանդակալու Արարատ», «Արվեստի ասպետ», աղանդակալու «Ոսկե Խաչ» և «Համագործակցության աստղ» շքանշաններով: Հովհաննես Չեֆիզյանը երեք միջազգային ակադեմիական իսկական անդամ է: 1979-

1984 թթ. ընտրվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր: Երևանի պատվավոր քաղաքացի է:

Համերգին, որի ռեժիսորն էր Արթուր Սահակյանը, ելույթներով հանդես եկան Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը և Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը՝ գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ Սերգեյ Սմբաթյանի և Հարութ Ֆազլյանի ղեկավարությամբ: Մենակատարներն էին Բերժ Զարադյանը (տենոր)՝ ԱՄՆ-ից, Կարինե Բաբաջանյանը (սոպրանո)՝ Գերմանիայից, Սոֆյա Սայադյանը (սոպրանո), Սոֆիա Բաղդասարյանը (սոպրանո), Հայկ Թոնգուլյանը (տենոր), Արամ Խաչատուրեանը (բարիտոն) և Արամ Աբգարյանը (տենոր): Հնչեցին Ջ. Վերդիի, Կ. Օրֆի, Յ. Շոտաուսի, Կ. Ջենկինսի, Կոմիտասի, Ա. Խաչատրյանի ստեղծագործություններից: Ելույթ ունեցան նաև ՀՀ ժողովրդական արտիստ Ռուբեն Սաթևոյանը (կատ.)

«Զարթոր լաո» ստեղծագործությունը), ՀՀ ժողովրդական արտիստ Գևորգ Դաբադյան և ընկերները (կատ.)՝ «Սայաթ Նովա» պոպուրի, դուդուկ, Արա Գևորգյանը (կատ.)՝ «Չեֆիզյանին», նվագախմբի, երգչախմբի և մենակատարների համար), «Բերդ» պարային անսամբլը, ղեկավար՝ Կարեն Գևորգյան (կատ.)՝ «Բերդ պար»-ը, և Սոֆի Դուրյանի պարի և հոգու թատրոնը (կատ.)՝ «Սայաթ-Նովա»-ն): Ասումքեց Սերգուշ Բաբադյանը (Պ.Սևակի «Ուշ ուշ են ծնվում» և Ե. Զարենցի «Երևան» գործերը): Համերգի ավարտին Հովհաննես Չեֆիզյանի ղեկավարությամբ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը կատարեց Կոմիտասի Հարսանեկան երգերից, Ջուզեպպե Վերդիի «Ազգերի հիմնը», «Արդա» օպերայից հաղթական քայլերգը և Կարլ Ջենկինսի «Ադիեմուս» սիմֆոնիկ ստեղծագործության ֆինալը:

ԱՐՄԻՆԵ ԱՌՈՅԱՆ

Երաժշտագետ,

«Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր

Երաժշտական ճանաչողության շինարարը

Հովհաննես Չեֆիզյանն իր ստեղծագործական բուռն և հայրենամղ գործունեությամբ ուրույն հետք է թողել ազգային կատարողական արվեստի զարգացման գործում: Համոզեալ գալով բազմաթիվ համերգներով, միշտ յուրովի է ներկայացել, իր ինքնատիպ կատարողական ոճով և ստեղծագործությունների նորովի մեկնաբանմամբ ոգեշնչել բազում երաժիշտերի: «Երաժիշտ» ամսաթերթի սույն համարում ներկայացնում ենք Հովհաննես Չեֆիզյանի ղեկավարությամբ կայացած համերգներից մեկին նվիրված՝ արվեստագիտության դոկտոր, ԵՊԿ պրոֆեսոր Սվետլանա Սարգսյանի հոդվածը, որը տպագրվել է 2000 թ. նոյեմբերի 28-ին, «Ազգ» օրաթերթում (այժմ՝ չաբաթաթերթ):

Խմբագրական

Հովհաննես Չեֆիզյանի անձնվեր ստեղծագործական կյանքի մի քանի տասնամյակները համոզում են, որ, համեմատելով նրա, հայ մշակույթի ու իր խմբերգային ավանդույթի արժանավոր պահպանման:

Ամենահինը լինելով ազգային կատարողական արվեստի ծնավորման մեջ, խմբերգային ավանդույթը մինչև օրս խաղում է հիմնարար դեր, քանզի արդի և պատմական երաժշտական փորձերի հավասարակշռություն է ստեղծում:

Հովհաննես Չեֆիզյանի գործունեությունը կառուցվում է այդ հավասարակշռության գիտակցման վրա: Հայ երաժշտության դասականների նման նա մշակույթի ծառի արմատը տեսնում է հենց վոկալ մշակույթում: Պրոֆեսիոնալիզմի նոր աստիճանի բարձրացնելով Հայաստանի խմբերգային արվեստը, Չեֆիզյանը կարողացավ երգչախմբի մոնումենտալ հնչողությամբ մարմնավորել մեր ժողովրդի ոգու վեհությունն ու ուժը: Կոմիտասի և Մ. Եկմալյանի խմբերգային ստեղծագործությունների ընթերցմամբ՝ Լ. Վ. Բեթովենի, Ա. Խաչատրյանի և Ա. Հարությունյանի ծավալուն վոկալ սիմֆոնիկ երկերում, Կ. Ա. Մոցարտի, Զ. Բեռլիոզի, Ը. Գունոյի, Ջ. Վերդիի, Գ. Ֆորեի ստեղծագործությունների ժանրի ու ոճի մեկնաբանությամբ՝ տարբեր ռեքվիեմներում, վերջապես, թե՛ հոգևոր, և թե՛ աշխարհիկ բովանդակության փոքր ծավալի բազմաթիվ ստեղծագործություններում Չեֆիզյանը ձևավորեց իր անհատական կատարողական ոճը, որը կարելի է բնութագրել որպես երաժշտական որմնապատկերի ոճ: Դրան բնորոշ են երգչախմբի հզոր, հավասարակշիռ հնչողությունը (որտեղ ֆակտուրայի ու ծայրավարության նվազագույն փոփոխությունները դիմամիկ են դարձնում ընդհանուր հնչողությունը), ինչպես նաև տեմպային ու գունային առանձնահատուկ գունավորումը, երբ ըստ նպատակահարմարության օգտագործվում են կամ հակադիր գույներ, կամ էլ միագույն ներկայանալ:

Հովհաննես Չեֆիզյանի կողմից կերտվող երաժշտական

որմնապատկերների ոճը բնութագրվում է խմբերգային այն ամբողջ զանգվածի հնչողության արտաքին վեհաքանցության, որը տպավորիչ է իր տարածական հեռանկարով: Մերձավոր ու հեռավոր հնչողական ոլորտները, որոնք շեշտվում են արտաբերման արտահայտչականության և ռիթմիկ դիմամիկայի շնորհիվ, ունկնդիրին տանում են երաժշտության առանձնահատուկ տաճար, որ կառուցել է կարկառուն շինարար Հովհաննես Չեֆիզյանը:

Հայաստանի ակադեմիական երգչախումբը, որն արդեն շուրջ քառասուն տարի ղեկավարում է մասետրո Չեֆիզյանը, վերջին տարիներին հայրենիքում քիչ է ելույթ անցնում: Ուստի նոյեմբերի 24-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում կայացած համերգը հազեցրեց խմբերգային արվեստի բազմաթիվ երկրպագուների բաղձալի հանդիպման ծավալը: Համերգի նկատմամբ մեծ հետաքրքրությունը պայմանավորված էր նաև ծրագրով. առաջին անգամ երևանում կատարվում էր 150 տարի առաջ երկու երգչախմբերի (խառը և մանկական, մասնակցում էին «Հայաստանի փոքրիկ երգիչները»), սիմֆոնիկ նվագախմբի, մեներգչի և երգեհոնի համար Հեկտոր Բեռլիոզի գրած «*Te Deum*»-ը: Հայկական պրեմիերայի համար առաջարկված էր «*Te Deum*»-ի խմբագրումներից մեկը:

Բեռլիոզի ծավալուն ստեղծագործությունն անչափ համապատասխանում է Չեֆիզյանի կատարողականության իդեալներին, ով երաժշտությամբ տեսնում է դրա վեհացնող էությունը: Ասես պահպանելով իր կոլեկտիվի ակադեմիական ոլորտը, դիրիժորը հազվադեպ է դիմել զուտ ժանրային բնույթի ստեղծագործություններին: Նրան գրավում են ծավալուն բազմամաս կոմպոզիցիաները, որոնց հակադիր մասերը միաձուլվում ամբողջություն են կազմում: Ճկունորեն կառավարելով հնչողության տարբեր շերտերը, Չեֆիզյանը դրանք ենթարկում է ստեղծագործության գլխավոր թեմային: Հանդիսավորությունը կամ ողբը, ցատունը կամ ցնծու-

թյունը, խոստովանանքը կամ ապաշխարանքը և հոգևոր երաժշտության ծնած մյուս կերպարային-հոգեբանական վիճակները կանխորոշում են ստեղծագործության հիմնական պատկերը:

Հայ երաժիշտների կատարմամբ Բեռլիոզի «*Te Deum*»-ը (լատիներեն՝ Աստված, քեզ ենք գովերգում) հիշողության մեջ մնաց որպես գովաբանության տոնական օրհներգ: Ի տարբերություն զուսպ Ռեքվիեմի, «*Te Deum*»-ը ամբողջովին փայլում է երկյուղածության բերկրանքով, հազեցած է աստվածային, երկնային և մարդկային, երկրային համադրություններով, սակայն մնում է ռոմանտիզմի գեղագիտության շրջանակներում: Երգչախմբի կատարմամբ ստեղծագործության մասերը նման էին երկնականարների (երգեհոնի նվագաբաժնի շնորհիվ մեծ հանդիսավորությունն ընդօժեց Աննա Բակունցը), իսկ նվագախմբային միջին մասը և հատկապես Տիրոջ ծնված 6-րդ մասը տենորի շատ գեղեցիկ երգաբաժնով (այստեղ վստահորեն մեներգեց Ռուբեն Նուրիջանյանը) ընկալվեցին քնարական հայտնությամբ (ուզում են դրվատել նաև Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբին):

Տարիներ առաջ Հայաստանի երգչախումբը Բեռլիոզի «*Te Deum*»-ն իր հյուրախաղերի ժամանակ հնչեցնում Մոսկվայում, Պետերբուրգում, Պրահայում: Ներկայիս կատարումը, թեև ուշացած է բայց անհրաժեշտ էլ է այդ փառաբանված երգչախմբի ստեղծագործական կենսագրության մեջ: Հիանալով դիրիժորի և խմբի ներդաշնակությամբ, հպարտություն ասելով կապելլայի ազգային արվեստի մարգարտի համար, միաժամանակ ականա մտածում են. որ Հայաստանի ակադեմիական երգչախումբը ներկայումս հայտնվել է պետության ազգային շահերի մայրթերին, իսկ նրա գործունեությունը չի խրախուսվում, ուստի և չի զարգանում:

Բեռլիոզի «*Te Deum*»-ի երևանյան պրեմիերան մեծապես գերազանցում է Հայաստանի արդի արվեստի գեղարվեստական չափանիշները, և դա ակնհայտ էր դահլիճում ներկաներից յուրաքանչյուրի համար:

ՍԱՎՏԼԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
Արվեստագիտության դոկտոր,
ԵՊԿ պրոֆեսոր,
«Ազգ» 28 նոյեմբերի, 2000 թ.

ԵՐԵՎԱՆԻՑ՝ ՎԱՌ ԳՈՒՅՆԵՐՈՎ

10

Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախմբի (ՀԱՖՆ)՝ երեկ երեկոյան (նոյեմբերի 15-ին, Լյու Յորքի «Քարմենի հոլլում» - *թարգմ.*) տեղի ունեցած համերգը նվիրված էր Արամ Խաչատրյանի ծննդյան 120- և Սերգեյ Ռախմանինովի ծննդյան 150- ամյակներին: Ունկնդրի համար ավելի զարմանալիս այն է, որ ՀԱՖՆ-ն երկու տարի հետո 100 տարեկան կդառնա: Եվ որ այս ընթացքում նրանք աշխատել են հայտնի արտիստների հետ՝ Աշկենզազից մինչև Ցուկերման, Ելույթներ են ունեցել աշխարհով մեկ և ծայնագրել բազմաթիվ սկավառակներ:

Պետք չէ առանձնապես զարմանալ:

Հայաստանը, որի թագավորությունը ժամանակին տարածվում էր ամբողջ Անատոլիայում, աշխարհին տվել է այնպիսի կոմպոզիտորներ, ինչպիսիք են Ալան Յովհաննեսը, Արամ Խաչատրյանը և Քչիշտոֆ Պենդերեցկին [վերջինս ծնվել է Լեհաստանում, բայց նրա տատիկը հայ է՝ լեհահայ Եվգենյա Շիլկիևիչն է, որը նրան մանկության տարիներին հաճախ տարել է հայկական եկեղեցի՝ պատարագի (ծանոթ. - թարգմ.)], հոյակապ եկեղեցիներ և իմ սիրելի գրողներից մեկին՝ Վիլյամ Սարյանին: Բացի այդ, տվել է բացարձակապես յուրահատուկ երաժշտական ծայնակարգեր, հարմոնիկներ ու մեղեդիներ:

Որոշ կոմպոզիտորներ կարող են փորձել թաքցնել արաբականի, եբրայականի, հին հունականի ու կովկասյանի այս անհավանական համադրությունը: Բայց Արամ Խաչատրյանին դա դուր էր գալիս, և նրա երաժշտությունը լիովին ծանաչելի է: Այսպիսով, երեկ երեկոյան կատարված երկու ստեղծագործությունները ծանոթ էին թվում նույնիսկ նրանց, ովքեր միայն զիտեին նրա «Սուսերով պարը»:

Ավնհայտ է, որ ՀԱՖՆ-ն ստեղծված է այս երաժշտության համար, և դիրիժոր Էդուարդ Թովսյանի ղեկավարությամբ դրսևորվեցին երաժիշտների անհատական զույները: Ամենից առաջ նկատի ունեմ շքեղ լարայիններին: Տեմբրային հնչողությունը կոշտ էր (սակայն երբեք՝ կոպիտ), դրանք բարձրանում էին, երբ երաժշտությունն էր պահանջում, իսկ

մնացած հատվածներում հյուբեղ: Փողային գործիքների մեկնակատարները հիասքանչ էին նվագում (կատարողների ցանկը հասու չէր, ուստի չեմ կարող մշել անունները): Կոմպոզիտորին չափազանց անհրաժեշտ փողային և հարվածային գործիքները վերահսկողության ներքո էին, բայց միշտ՝ ազդու կերպով:

Մաեստրո Թովսյանն ուներ երկու արժանիք և մեկ (իմ կարծիքով) խանգարող հանգամանք: Արժանիքները նրա լիակատար վերահսկողությունն էր նվագախմբի նկատմամբ և Ա. Խաչատրյանի երաժշտության կառուցվածքի անսխալ զգացումը: Կոմպոզիտորի համար էական է նվագախմբային կրեչենդոն՝ անկախ նրանից, թե որքան հանդիսավոր էր սկիզբը (ինչպես «Սպարտակի» «Աղաջոյուն»), նվագախմբի հնչողությունն անխուսափելիորեն ուժեղանում էր, ավելի հագնում, պայծառանում: Եվ Էդուարդ Թովսյանն այս դրվագները լուծում էր նրբորեն և առավելագույն վերահսկողությամբ: Սակայն ջութակի Կոնցերտի, ինչպես և մշված «Աղաջոյի» և հաջորդած Ռախմանինովի խնդիրն այն էր, որ դանդաղ դրվագները չափազանց դանդաղ էին, գրեթե ետ մնացող: Այո՛, նա ՀԱՖՆ-ն թմբիրից արագ դուրս բերեց դեպի տպավորիչ դրվագներ, բայց հուզական ռոմանտիկ զգացմունքները գերակայում էին: «Սպարտակի» այդ երեք հատվածները սքանչելի էին (Ա. Խաչատրյանը միշտ էլ դուրս էր բերել): Ջութակի և նվագախմբի Կոնցերտը չափազանց նրբագեղ էր:

Ինչպես դիրիժորը, ջութակահար Սերգեյ Խաչատրյանը ևս զուրկ է թատերականությունից, Ջոշուա Բելլի հատուկ պահվածքից: Գվարների դել Ջեզուի պատրաստած Ա. Խաչատրյանի ջութակի ծայներանգները հնչեղ էին, երբեք՝ ցուցադրական, բոլոր երեք կադենցիաներում էլ մշտապես կենտրոնացած:

Ինչ խոսք, սա ամենահախտուն էներգիայով կոնցերտ է: Պարոն Ա. Խաչատրյանը բավականին աշխույժ էր և «Անդանտի» սոստենուտոն (դանդաղ և զուսպ) ապշեցուցիչ գեղեցիկ դարձավ առանձնապես տխուր ներածությունից

հետո: Այն ավելի ամբոխահաճո էր ու հավանաբար գոհացրել է ժամանակին նաև Իոսիֆ Ստալինին: Համեմատած Դ. Շոստակովիչի հետ կա մեկ տարբերություն. վերջինս ստիպված էր հաճոյանալ Ստալինին, նրա երաժշտությունը պարունակում էր ծածկագրեր և հանելուկային հատվածներ: Դրանք նույնքան խորհրդավոր են, որքան հաղթական: Արամ Խաչատրյանը քիչ խնդիրներ ուներ մշակութային քաղբյուրոյի հետ: Նրա հայկական երաժշտությունը էքստրավերտ էր, իմպուլսիվ և ցուցադրում էր նրա անհատականությունը:

Եվ Արամ Խաչատրյանը, և՛ Սերգեյ Ռախմանինովը ծնվել են սխալ ժամանակներում: XX դարի կեսերին նրանք չխոնարհված ռոմանտիկներ էին: Ռուս Ռախմանինովը մի փոքր կորցրեց ժողովրդականությունը (չնայած այն հետագայում շեշտակիորեն աճեց (տաղանդավոր. - *հսմթ.*)՝ եռանդուն դաշնամուրային նվագի շնորհիվ): Խաչատրյանը որոշ շրջանակներում դեռևս համարվում է... այսպես ասած, ապագասակարգային: Գեղեցիկ տարաշխարհիկ մեղեդիները չեն գնահատվում «լուրջ» երաժիշտների կողմից:

Ռախմանինովի 2-րդ Սիմֆոնիան գրավիչ է իր սավառնող մեղեդիներով, իր հյուբեղ հյուսվածքով և, անխուսափելիորեն, կտրուկ ու բարձրաձայն եզրափակիչներով: Էդուարդ Թովսյանն այդ ամենը որսաց իր հրաշալի նվագախմբով: 2-րդ և 4-րդ մասերի տեմպերը բավականին գրավիչ էին, իսկ վերջին դրվագները՝ բացահայտորեն հիասքանչ:

Ես պարտվեցի կատարածս խաղաղությւը, երբ նա քիսի դուրս եկավ: Ես խաղաղությւը կատարեցի մի քանի դուրսով, որ դա կլինի «Սուսերով պարը»: Բայց ոչ, դա այլ երևելի մոնուշ էր՝ «Դիմակահանդեսի» վալսը: Ունկնդրի համար այն անխուսափելիորեն հմայիչ էր և արժանիորեն հյուբեղ:

ՀԱՐԻ ՌՈՒՆԻԿ

27 նոյեմբերի 2023 թ.

Անգլերենից թարգմանեց ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

<https://azg.am/am/%D5%A5%D6%80%D5%A5%D6%82%D5%A1%D5%B6%D5%AB%D6%81>

ЭПИЛОГ

Si vis pacem, para bellum
Корнелий Непот



Данная статья не претендует на звание научной. Это взгляд изнутри на происходившие в последнее время события в жизни армянского общества. Здесь много личного и эмоционального. Истина – в душе познающего.

Близится к завершению 2023–й, блокадный год...

Мало кому верилось, что после чудовищной войны 2020–го, поглотившей десятки тысяч молодых жизней, кто-то вернется в Арцах. Однако вернулись. Вернулись, чтобы горел очаг в родительском доме, вернулись на землю своих предков, в надежде построить будущее для своих детей.

Все оказалось болезненной иллюзией...

Сжатый до клочка Арцах, в окружении неприятеля и в присутствии представителей третьей страны, был уже другим. О возврате к прежней жизни не могло быть и речи: кровоточащая рана, не зажившая после ожесточенной войны, унесшей десятки тысяч жизней – молодых и опытных бойцов, пламенных сынов своей Родины, была свежа и причиняла невыносимую боль.

Время словно повернулось вспять – жизнь арцахцев стала похожа на выживание вольной птицы в клетке. Действительность напоминала 90–е годы прошлого века: отключение газоподачи, электричества, проблемы раненых и инвалидов. Разница была лишь в умонастроении и мироприятии общества. Поникие и убитые горем люди, брошенные на произвол судьбы, с угасающей надеждой на восстановление нормальной жизни, находили в себе силы заново строить жизнь на родной земле, и это перетягивало чашу весов проблем разного уровня.

В декабре 2022–го года была перекрыта единственная дорога, связывающая Арцах с внешним миром. По этой дороге, проходя через десяток КПП, доставлялись продовольствие, продукты первой необходимости, медикаменты. Единственный наземный путь, дающий возможность видеться с родственниками, проживающими в Армении и России, дорога к Ераблур...

Чтобы читатель явственно представил сложившуюся ситуацию, нужно просто выключить свет, интернет, газ в своей квартире и подумать, как приготовить обед для домашних, как отстирать белье, как связаться с детьми-школьниками, из чего приготовить торт ко дню рождения ребенка. Попробуйте пешочком дойти до места назначения (рабочего места, поликлиники, детского сада и др.), ибо за отсутствием топлива встал городской транспорт. Попробуйте поработать в холодном помещении, и при этом всю ночь простоять в очередях за хлебом или молочкой, потому

что, если вдруг повезет, можно будет на завтрак приготовить обычный бутерброд – хлеб с сыром. Доставка продуктов в ближайшее время была невысима. Большая часть населения голодала.

Попробуйте найти в себе силы смотреть в глаза детям и дать приемлемое объяснение текущей действительности... И, может, тогда вы в состоянии будете реально представить сложность сложившейся ситуации.

...С начала блокады население в панике сметало с полок магазинов все: муку, сахар, масло; особенно остро ощущался дефицит фруктов и овощей, картошки. Не хватало мыла, стирального порошка, памперсов. Очень скоро стала ощущаться нехватка медикаментов в аптеках – простейших антибиотиков и болеутоляющих. На грани закрытия находилась типография. Летом остро встала проблема водоснабжения. Вследствие отсутствия топлива прекратилась междугородняя и межрайонная связь. И экономический коллапс привел к коллапсу гуманитарному. После установления новых границ, дорога длиною в час растянулась до шести. Если в городе остро ощущался дефицит фруктов, овощей, молочных продуктов, то в деревнях не доставало сахара, соли, а сладостей не было нигде. Мы умудрились найти альтернативу, точнее, поступили как наши прабабушки и бабушки: из горстки муки и ложки масла (растительного или свиного) готовили печенье, где главным ингредиентом был бакмыз (дошап).

В больницах в целях экономии медикаментов были отменены все плановые операции; под угрозу ставилась жизнь рожениц за невозможностью доставить их в республиканский роддом; многие дети остались без прививок. В учебных заведениях было сокращено время академических уроков. И все же...

И все же, за десять месяцев блокады мало у кого появлялось желание покинуть край. В нашем дворе школьники лет 10–14 прокопали клумбы, до этого засаженные цветами, и посадили на их место овощи и зелень. Возможно, это покажется кому-то незначительным штрихом в общей картине. Но это свидетельствовало о смекалке, и еще более – о стойкости духа и желании оставаться на родине. Ничто, казалось, не предвещало массового исхода населения. Однако...

Настроение народа резко изменилось после 19 сентября. Массированные полномасштабные атаки по территории всего Арцаха, в том числе, против мирного населения, не оставляли шансов продолжать жизнь в Арцахе. В подвалах, где люди спасались от артобстрелов, своими силами устанавливались дровяные печи; соседи делились друг с другом, чем бог послал. Женщины были ухожены, в украшениях, хотя у многих на сердце было неспокойно: мужья и братья стояли на границе. А когда наступало затишье, детвора, как ни в чем не бывало, резвилась во дворе.

...Милый двор, такого больше нигде в мире не найти. Двор, где можно было и на ночь двери не закрывать на ключ; где велосипеды, коляски, самокаты оставались в открытых беседках, и не надо было переживать за их сохранность; двор с благоустроенной детской площадкой. Двор, где можно было оставить ребенка под присмотром соседки, или попросить кого-то принести из магазина продукты; поделиться сокровенным, излить душу. А когда выпадал первый настоящий снег, родители с детьми лепили снеговиков, играли в снежки до поздней ночи... Особую ауру нашего края чувствовали все, кто хоть раз посетил Арцах. Припоминаю, как-то заметив открытую сумочку у явно приезжей дамы, я предупредила хозяйку об этом, на что она, улыбаясь, ответила: “А я не беспокоюсь: в Карабахе честные люди живут”. Что могло быть большей наградой, чем услышанное. Все, вне зависимости от национальной принадлежности, кому посчастливилось пожить хоть месяц в Арцахе, утверждали, что это то самое место, где можно растить и правильно воспитать детей...

...Из отцовских домов уносили мы с собой незамысловатый скарб, уместившийся в одном рюкзаке... уносили боль от непоправимой утраты... от бессилия что-то изменить... ибо главной мыслью было – спасти детей от физического истребления и голодной смерти.

...Мой светлый, ухоженный город. Даже блокада не могла помешать соблюдать чистоту на улицах: коммунальные службы продолжали ухаживать за цветочными клумбами, соблюдались санитарные условия, улицы подметались ежедневно. Мой красивый Степанакерт – столица Арцаха, с ухоженными скверами, фонтанами, с памятником С. Шаумяну в центре города, на пяталке, с Папик–Татик у въезда в город.

Все осталось в прошлом: Амарас, Гандзасар, Дадиванк, Хазанчецоц... множество красивых старейших церквей; чудесных мест и явлений, единственных в своем роде – Астхашен, Качахакаберд, Тнджре...

Осталось в прошлом путешествие по серпантин–дороге Арцах–Армения в окружении древних гор и величественного пейзажа; дороге, подобной сарьяновскому пейзажу с невысимиыми цветами, меняющему свой облик каждые несколько дней: то в красных цветах, то в желтых, то в лиловых; дороге с аккуратными часовнями и церквями, шумными реками, прозрачными родниками...

О райской жизни на райской земле остались одни лишь воспоминания.

НИНА АКОПЯН

музыковед

Ереван

Декабрь, 2023 год

ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՆԵՐԿԱ ՌԵՍՏՈՐԱՆՆԵՐԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռեստորանն, ինչպես հայտնի է, բնորոշվում է որպես «վայելույց սարքավորված և պատշաճավոր պանդոկ, որտեղ կարելի ճաշել, ընթերցել, ոգելից ըմպելիքներով համդերձ» (Ս. Մալխասեան «Հայերեն բացատրական բառարան», հատոր չորրորդ, Երևան, 1945, էջ 160) և, որի առօրյայի, հատկապես երեկոյան ժամերի անքակտելի մասն է կազմում երաժշտությունը։ Ռեստորանները հատուկ են Երևանի քաղաքային կյանքին, ժամանցի ընդունված և սիրելի վայրերից են, թե՛ երևանցիների, թե՛ օտարների համար։ Գործում են քաղաքի տարբեր վայրերում, յուրաքանչյուրն իր ուրույն դիմագծով, որ վերաբերվում է ներքին հարդարանքին՝ «դեկորին» բրենդային ուտեստներին, երաժշտախմբին, վերջինիս կազմին, երկացանկին և այլն։ Այդ ռեստորաններից են, մասնավորապես «Նոյան», «Քամանչա», «Արարատ» և «Երևան» պանդոկները («Պանդոկ» բա-

բացվել է 2019 թ. և անխափան գործում է մինչ օրս։ Բարձր վարկանիշ ունի այցելուների շրջանում։ Դրանք տարբեր սոցիալական պատկանելիության և մասնագիտության տեր երևանցիներ են, սփյուռքահայեր, զբոսաշրջիկներ և այլն։

Ռեստորանը ընտանեկան ժամանցի հայտնի, մաս եզակի վայրերից է Երևանում։ «Քամանչա» ռեստորանի ստեղծման օրից ի վեր այստեղ մշտապես հնչում է ազգային երաժշտություն։ Եվ ոչ պատահականորեն ռեստորանի երաժշտախումբը նույնպես կոչվում է «Քամանչա»՝ հայերի մեջ տարածված ավանդական նվագարանի անվանումով։

«Քամանչա» երաժշտախումբը սովորաբար ելույթ է ունենում երեկոյան ժամը 19:30-ից, երբեմն, հանգամանքների բերումով մինչև ուշ գիշեր։

Երաժշտախումբը վոկալ-նվագարանային է։ Բաղկացած է տասը երաժիշտներից՝ ութ նվագածու և երկու երգիչ (Երեվանյան ռեստորանային երաժշտախմբերում, ըստ տվյալ ռեստորանի հայեցողության և հնարավորությունների երաժիշտների քանակը տատանվում է երեքից մինչև տասը, երբեմն մաս ավելի)։

Հարկ է նշել, որ «Քամանչա» երաժշտախմբի գրեթե բոլոր անդամներն ունեն բարձրագույն երաժշտական կրթություն ավարտել են Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիան կամ Խ. Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարանը։ Երաժշտախմբում կիրառվում են ներկայումս Հայաստանում առավել հայտնի և տարածված ավանդական փողային, լարային, հարվածային գրեթե բոլոր նվագարանները՝ շվին, թավ շվին, պկուն, բլուլը, դուդուկը, գուռնան, քանոնը, քամանչան, դիլը։ Գործի են դրվում նաև երկու սինթեզատորներ՝ մենակատարային և նվագակցող, և կլարնետը։ Հնչողության բարելավման նպատակով կիրառվում են տեխնիկական տարբեր միջոցներ։ Նշելի է, որ երաժշտախմբի նվագածուները հմտորեն տիրապետում են մի քանի նվագարանների։

Բազմաբովանդակ է երաժշտախմբի երկացանկը, որը ներառում է հայ երաժշտության աշխարհիկ գրեթե բոլոր ոլորտները՝ ժողովրդական, աշուղական, կոմպոզիտորական, թե՛ վոկալ, թե՛ նվագարանային ստեղծագործություններ, որոնք փոխադրվում և գործիքավորվում են երաժշտախմբի համար, իրենց իսկ երաժշտախմբի անդամների կողմից, հաճախ նաև թեմատիկ և ծայնակարգային (լադային) հիմքով, վերածվում շարքերի։ Դրանք են՝ Կոմիտաս վարդապետի երգերի և պարերի, Սայաթ-Նովայի երգերի շարքերը, Շերամի «Արդեն մութն է ընկել է», «Փնջիկ-մնջիկ», «Պարտեզում վարդ էր բացված», Խ. Ավետիսյանի

Նշելի են ռեստորանային երաժշտի պրոֆեսիոնալ ունակությունները, հմտությունները։ Այսպես օրինակ, ռեստորանային երաժիշտը սովորաբար տիրապետում է ոչ միայն երաժշտախմբի ամենօրյա երկացանկին, այլև քաջատեղյակ է ազգային և ոչ միայն ազգային երաժշտությանը, որովհետև ռեստորանի այցելուների պատվերները հաճախ դուրս են երաժշտախմբի երկացանկից։ Այդ պատվերները պետք է բավարարել ոչ միայն մտաբերելով պատվիրված ստեղծագործությունը, այլ համապատաստի վերածել այն համերգային նմուշի, այսինքն տեղում գործիքավորել, ձևավորել որոշակի կուռ կոմպոզիցիոն կերտվածքով, և ներկայացնել կատարողական պատշաճ մակարդակով, գոհացնելով պատվիրատուին։

Ռեստորանային երաժիշտը, մասնավորապես նվագածուն ի գործ է մաս անհրաժեշտության դեպքում, ասենք հետևելով մենակատար երգչին, հարմարվելով նրա երգչական ձայնածավալին, իսկույն տոնայնական տարբեր փոփոխություններ (տրանսպոզիցիա, մոդուլացիա) կատարել, նաև իրավիճակով պայմանավորված համապատաստի փոփոխել երկացանկը, արագ և սահուն անցնելով մի ստեղծագործությունից մյուսը։ Հատկապես նշելի է ռեստորանային երաժիշտի իմպրովիզացիա անելու ունակությունը։ Բացի նոտա կարդալուց նա պետք է մաս լավ իմպրովիզացիա անի, որի ընթացքում կերևա թե՛ նրա միտքը, թե՛ տեխնիկան, թե՛ կատարողականությունը։ Ինչպես հայտնի է, Հայաստանում իմպրովիզացիան կատարվում է մեծ մասամբ նվագարանային տարբերակով։ «Քամանչա» երաժիշտների կատարմամբ կան ստեղծագործություններ, որոնք գրվել են այնպես, որ միջին կամ այլ հատվածում նվագածուն կատարի իմպրովիզացիա։ Նշենք, որ չի եղել մի օր, որ «Քամանչա»-ի երաժիշտը իր իմպրովիզացիան կատարի այնպես, ինչպես կատարել էր նախորդ օրը։

Երևանի (և ոչ միայն Երևանի) ռեստորանային երաժշտական մշակույթի առանձնահատկություններից է այսպես կոչված սարթերեն լեզուն։ Սա յուրօրինակ գաղտնալեզու է, ի հայտ է եկել հնում՝ աշուղական արվեստում, երբ խոսելու ընթացքում բառերն արտասանվում են թարս՝ ձևափոխված (Սարթերենի մասին տե՛ս՝ Մ. Աղայանի «Հայ գուսանները և գուսանա-աշուղական արվեստը» գրքում, Հայպետհրատ, Երևան 1959, էջ 39)։ Սարթերենի նպատակն է ռեստորանի այցելուից թաքցնել երաժշտական խոհանոցը։ Բացի սարթերենից բարձր հնչող երաժշտության ժամանակ, կամ ուղղակի երգի կամ նվագի ընթացքում ռեստորանային երաժիշտները շփվում են ժեստերով։ Օրինակ՝ ստեղծագործության տոնը փոխելու կամ երգչի մուտքը, ստեղծագործության ավարտը նշելու նպատակով և այլն։ (Գոյություն ունի երաժշտական ժեստերի ռեյտատիվ համակարգ, որ կարելի է կիրառել ցանկացած օգտագործման և նպատակների համար և անհրաժեշտություն չկա նորոպի հնարած ժեստեր կիրառել։ Ռեյտատիվ համակարգը կիրառվում է որոշ երկրների ուսուցման տարբեր գործընթացներում. - **Խմբ.**)։

Հայտնի իրողություն է, որ ռեստորանային երաժշտությունը մեզանում, հատկապես մասնագետների՝ երաժշտագետների կողմից լրջորեն չի ընկալվում, և ավելին հաճախ քննադատվում և պիտակավորվում է որպես ցածրորակ, անմակարդակ, անճշակ, երբեմն նաև ապագային և այլն։ Գոյություն ունի և հակառակ տեսակետը, համաձայն

որի ռեստորանային երաժշտությունը հայ քաղաքային բազմաբովանդակ երաժշտական կյանքի և մշակույթի կարևոր անքակտելի ոլորտներից է և դիտարկվում է, որպես վաղուց արդեն կայացած պրոֆեսիոնալ երևույթ, իր պատմական արմատներով, մշակված, կայունացած նկարագրով, որն է նվագարանային և վոկալ-նվագարանային կերպերը, նվագարանային կազմը, բազմաժանր, հարուստ երկացանկը, կատարողական ուրույն, ճանաչելի ոճը և այլն, և որը նաև նպաստավոր է ազգային նվագարանների և երաժշտության պահպանման և տարածման համար։ Երևույթը լուսաբանող արժեքավոր ուսումնասիրություններով հանդես են եկել երաժշտագետ Լ. Եփրեմյանը, ազգագրագետ Հ. Պիկիչյանը։ Ժամանակին թեմային մասամբ անդրադարձել են Ռ. Աթայանը, Մ. Բրուսյանը, Ա. Սարյանը, Ա. Կիրակոսյանը։ Կարծում ենք այս բազմաբովանդակ, բազմաշերտ և այնքան հետաքրքիր երևույթի դիտարկումները և հետազոտումը անհրաժեշտ է շարունակել։



Գյումրի, Աշուղները սրճարանում, գծանկարը՝ Գևորգ Բրուսյանի Գարեգին Լևոնյանի «Աշուղները և նրանց արվեստը» գրքից, Հայրեն տ. հր., Եր., 1944 թ.

ըն նշանակել է «հանրակացարան, հյուրատուն, իջևան ճանապարհի վրա, տեղ որտեղ ուղևորը կարող է օթևան և կերակուր գտնել, խան», Հայերեն բացատրական բառարան, հատոր չորրորդ, էջ 47։ Վերջին ժամանակներում բառը մեզանում գործի է դրվում որպես ընդգծված ազգային նկարագրով ռեստորան) և այլն։ Թվում է, թե ժամանակակից ռեստորանների պատմական նախատիպերն են անցյալում հայկական քաղաքների և հայաբնակ վայրերի սրճարանները՝ դայֆախաները կամ դայֆաները, որտեղ հանդես էին գալիս սազանդարային և աշուղական խմբերը։ Վերջիններից հատկապես նշելի և հիշատակելի են Ալեքսանդրապոլում (ներկայումս Գյումրի) XIX դարի երկրորդ կեսին աշուղ Ջիվանու խմբի ելույթները քաղաքի Տալոյենց (Տալյանների) հանրահայտ սրճարանում։

Վերադառնալով մեր օրեր, ներկա խնդրող շրջանակներում փորձել ենք դիտարկել մասնավորապես Երևանյան



«Քամանչա» բեմդի անդամները, ղեկավար՝ Լևոն Թևանյան

«Քամանչա» ռեստորանի երաժշտախմբի, կամ, ինչպես այժմ ռեստորանային երաժշտախմբերը հաճախ ընդունված է անվանել «բեմը»-ի գործունեությունը։

«Քամանչա» ռեստորանը գտնվում է քաղաքի կենտրոնում, Ալեքսանդր Մակենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնից ոչ հեռու։ Ռեստորանը

«Ծաղկած բալենի», «Մախմուր աղջիկ», «Ծաղկեփունջ», «Քամանչա» երաժշտախմբի ղեկավար՝ ՀՀ վաստակավոր արտիստ Լևոն Թևանյանի հեղինակած գործերը, որոնք աչքի են ընկնում բարդ ռիթմով, նվագարանների մենակատարային սուր-իմպրովիզացիոն հատվածներով և այլն, որը երաժշտախմբի մշտական «պարտադիր» երկացանկն է։

ԱՆԱՀԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԵՊԿ քանոնի բաժնի 4-րդ կուրս

«Ռոմանսիադա 2023»

Ռուսական ռոմանսի արվեստի պահպանման «Ռոմանսիադա» բարեգործական հիմնադրամը, «Մոսկվայի տուն» մշակութաբարձրարական կենտրոնը (ղեկավար Վահրամ Կարապետյան) Հայաստանի երաժշտական ընկերության (նախագահ, ԵՊԿ պրոֆեսոր Դավիթ Ղազարյան), ՀՀ ԿԳՄՍՆ աջակցությամբ, Պ. Զայկովսկու անվ. ՄՄԵԴ-ի Տատյանա Հայրապետյանի անվ. համերգասրահում իրականացրեցին 2023 թ. երիտասարդ կատարողների «Ռոմանսիադա» ռուսական ռոմանսի Մոսկվայի միջազգային մրցույթի ռեզիդենտ փուլը: Այս տարի հայկական ռոմանսները ոչ միայն հնչեցին հերթական մրցույթի ընթացքում, այլև հնարավոր դարձավ «Հայկական ռոմանսիադա»-ի համաձայնագրի ղավիթ Ղազարյանի և Վահրամ Կարապետյանի մտահղացումը տեսնել իրագործված «Աստղիկ» հրատարակչությունը լույս ընծայեց հայ կոմպոզիտորների վոկալ կամերային գործերի «Հայկական ռոմանսներ» ընտրանի-ժողովածու: «Հայկական ռոմանսիադա» 4-րդ մրցույթի երկու փուլերի արդյունքում դափնեկիրներ դարձան՝ 1-ին մրցանակ՝ Ռիտա Պետրոսյանը (մագիստրոսականի 2-րդ կուրս, ղեկ.՝ պրոֆ. Ռեբեկա Օջախյան), Ֆերդինանդ Մուրադյանը (ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի շրջանավարտ, ղեկ.՝ պրոֆ. Սվետլանա Կոլոսարյան), 2-րդ մրցանակ՝ Արիս Սինաբյանը (3-րդ կուրս, ղեկ.՝ պրոֆ. Օլգա Գաբայան), Հովհաննես Օրդանյանը (3-րդ կուրս, ղեկ.՝ պրոֆ. Գայանե Գեղամյան), 3-րդ մրցանակ՝ Մերի Սինաբյանը (3-րդ կուրս, ղեկ.՝ պրոֆ. Սվետլանա Կոլոսարյան), Կարինե Աղաջանյանը (մագիստրոսա-

կանի 2-րդ կուրս, ղեկ.՝ պրոֆ. Ռեբեկա Օջախյան): «Ռոմանսիադա» Մոսկվայի միջազգային մրցույթի եզրափակիչ փուլը կայացավ ղեկ-տեմբերին:

ՌԴ երաժշտական 11 փառատոնային ծրագրերի շրջանակներում, Մոսկվայում «Ռոմանսիադա» բարեգործական ֆոնդի կողմից, երիտա-



«Ռոմանսիադա» միջազգային մրցույթի ռեզիդենտ փուլի համաձայնագրի նախագահ՝ Դավիթ Ղազարյան, անդամներ՝ Գայանե Գեղամյան, Ռեբեկա Օջախյան, Վահրամ Կարապետյան, Գալինա Պրոխորովնա (մրցույթի նախագահ) և մրցույթի մասնակիցներ

սարդ կատարողների 27-րդ միջազգային մրցույթ «Ռոմանսիադա 2023»-ին, որպես համաձայնագրի անդամ հրավիրված էր Դավիթ Ղազարյանը:

Մոսկվայի մրցույթի եզրափակիչ փուլին մասնակցում էին 12 երկրների հարթողներ Ռուսաստանից, Ղազախստանից, Բուլղարիայից, Բելառուսից, Հայաստանից, Հն. Կորեա-

յից, Տաջիկստանից, Սիրիից, Չինաստանից: Հայաստանի մասնակիցը ելույթ ունեցավ մրցույթի եզրափակիչ երեք փուլերում և արժանացավ 3-րդ կարգի դիպլոմի և մեդալի:

Մեր հաղթողը Կոմիտասի անվ. կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղի շրջանավարտ, այժմ Ա. Սպենդիարյանի անվ. օպերային թատրոնի երիտասարդական ծրագրերի մասնակից Ֆերդինանդ Մուրադյանն է:

Այս հաղթանակը ևս մեկ անգամ ապացուցում է մեր՝ հայ վոկալ դպրոցի բարձր պրոֆեսիոնալիզմը:

Պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱՅԹՅԱՆԸ

Гений и Муза

В свет вышли 3 сборника пьес вдовы и Музы талантливейшего советского и армянского кинорежиссера, сценариста, писателя, резчика по камню и художника, Заслуженного деятеля искусств Агаси Айвазяна Греты Вердиян.

Филолог-русист, журналист, педагог по призванию, создатель и директор билингвальной школы «ВевГим», автор известной концепции раннего и базового образования «Школа «ВевГим» как коллективный интеллигент», учредитель «Фонда Агаси Айвазяна», автор повести «Четыре мамы», по которой снят фильм, писатель-драматург и безгранично творческая душа, Грета Григорьевна мечтает создать образовательный музейный комплекс им. Агаси Айвазяна.

«Агаси Айвазян — автор сценария знаменитого «Треугольника». На его счету еще с десяток сценариев, осуществленных полнометражных игровых фильмов. Будучи уже признанным писателем и киносценаристом, в 55 лет Агаси Семенович взялся за кинорежиссуру, снимая фильмы по собственным сценариям. Уже первый его фильм оказался удивительно кинематографичным — «Лирический марш», а второй — «Зажженный фонарь» — принес армянской кинематографии первый почетный приз Международной ассоциации кинопрессы. Как сценарист и кинорежиссер, он успешно воссоздал в образах лучшие национальные качества армянского народа. Талант его не менее ярко проявился и в изобразительном искусстве: он оставил потомкам около 150 полотен и 40 графических работ».

«Мое первое знакомство с Агаси Айвазяном состоялось, когда я прочла его рассказ «Киракос» и поняла, что для того, чтобы настолько глубоко описать человеческие чувства и переживания, писатель должен обладать очень тонкой душой. У меня было ощущение, что однажды я с ним непременно встречу и что в моей жизни он сыграет очень важную роль», — таким было первое впечатление Греты Вердиян о ее будущем муже, которое впоследствии оказалось оправданным.

«Знакомство их было далеко не обычной встречей, а слиянием душ двух людей, долгое время ищущих и нашедших друг друга... Видимо, какая-то высшая сила предопределила их дальнейшую судьбу...»

Развод Греты Григорьевны с первым мужем, бурные поиски и переживания в личной жизни Агаси Семеновича, деловое знакомство, искренняя дружба двух зрелых и состоявшихся людей однажды и на всю жизнь, объединила их судьбы и души, объединила таланты и обогатила творчество, сделав их Музами друг для друга.

«Агаси Айвазян считал Грету Вердиян, своим единственным другом и понимал, что это тот человек, который никогда его не предаст. Осознание этого заставило его перед смертью завещать Грете Григорьевне свое состояние — литературное и художественное наследие. Он отлично понимал, что после его смерти она продолжит его дело без каких-либо корыстных целей и будет хранить светлую память о нем».



Агаси Айвазян и Грета Вердиян

После ухода из жизни Мастера, Гретой Вердиян был создан «Фонд им. Агаси Айвазяна», в рамках которого она организовала и провела три «Айвазяновских чтения» и два театральные «Айвазяновских фестивали».

«Позже, оказавшись в плену у возраста, невольно начинаешь читать, перечитывать, продумывать, писать. Пошли инсценировки: Гомер, Лукиан, Цвейг, Вольтер, Уэллс, Соловьев, Одолевский, Айвазян, Габриелян, Коноплев, Арутюнянц. Одновременно пишется вот уже пятая часть мемуаров — повести «Многое из более многого». И все еще мечтается успеть создать музейный комплекс Агаси Айвазяна, исполнив тем самым мой долг перед мастером и народом», — делится Грета Григорьевна.

«Пока я жива, чувствую себя обязанной завершить незавершенные дела своего супруга, переопубликовать его произведения и пьесы. Своей основной целью я считаю то, чтобы творческое наследие Агаси Айвазяна было удостоено заслуженного признания и самой высокой оценки. Армянский народ может гордиться тем, что в лице Агаси он имеет своего Чехова, Золя, Шекспира. Творчество Агаси Айвазяна не изучено в полной мере. Глубже изучив его, можно многое для себя открыть».

Сегодня Грета Вердиян активно занимается популяризацией творческого наследия Агаси Айвазяна и мечтает пробудить интерес к его литературным произведениям и художественным работам, а так же ознакомить со своим творчеством ценителей искусства и за пределами Армении — предложить пьесы российским режиссерам и композиторам.

ВИКТОРИЯ ПОШОТЯН
режиссер музыкального театра

«Նարեկացի» արվեստի միությունում, նոյեմբերին տեղի ունեցավ «Ընդմիջտ միասին. հավերժի ճամփորդները» խորագիրը կրող հուշ երեկոն, որը նվիրված էր հայ արձակագիր, ռեժիսոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Աղասի Այվազյանին և նրա կնոջ՝ Գրետա Վերդիյանին:

Երեկոյի ընթացքում բացվեց Աղասի Այվազյանի կտավների ցուցահանդեսը և կայացավ Գրետա Վերդիյանի գր-



քերի շնորհանդես՝ հետադարձ հայացք նետելով տաղանդավոր ստեղծագործողների գործունեությանը:

«Նարեկացի» արվեստի միության ցուցահանդեսների համադրող Տաթևիկ Համբարձումյանը կարևորեց այս բա-



ցադիկ հնարավորություն՝ Աղասի Այվազյանի և նրա կնոջ՝ Գրետա Վերդիյանի արվեստին հաղորդակից դառնալու: Միջոցառումը վարեց ռեժիսոր Լևոն Իվանյանը:

Աղասի Այվազյանը հայ արձակագիր է, դրամատուրգ, հրապարակախոս, ռեժիսոր և գեղանկարիչ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1982):

<https://www.facebook.com/Naregats>

“Михаил Артемьевич, бесконечно благодарны за такой непосредственный и теплый отклик”

Концерт, состоявшийся в концертном зале CAFESJIAN 25 ноября, был посвящен памяти одного из самых значимых в истории национальной музыкальной культуры армянского композитора Рубена Саркисяна, ушедшего из жизни десять лет назад. Автор этой небольшой рецензии решил ее написать под впечатлением, а точнее под серией впечатлений от целого ряда прозвучавших произведений композитора, с которым был знаком и даже довольно часто участвовал в беседах особого рода — темы бесед почти всегда были связаны с проблемами осознания места человека в мироздании, постижения сущности бытия и мироустройства в пределах, доступных человеческому мышлению.

Пишу об этом потому, что прослушанная в концертных исполнениях музыка всколыхнула в памяти не только воспоминания об общении с человеком высочайшего и обширнейшего интеллекта, но и вернула в изрядно уставшее от нынешней суеты распадающегося социума сознание, ту мировоззренческую устремленность к извечным константам устройства Мира. Именно так, поскольку в “россыпи” концертных звуковых субстанций ухо просвещенного слушателя не только услышит, но и узрит дыхание Вселенной, ее величественную многомерность и многообразие форм. И не только. В музыке Рубена Саркисяна, в пространственных объемах его музыкального Мироздания присутствует и человек, пытающийся понять и осмыслить свое присутствие в нем, и само мироустройство. И эта пространственная пропорциональность взаимодействия Человека и Мироздания реконструирована в музыкальных коллизиях прозвучавшей в концерте музыки. Попытка хоть как то упорядочить многообразие композиционных приемов на слух привела к целой серии парадоксов. В первую очередь совершенно очевидно, что Рубен Саркисян одинаково свободно чувствует себя и в пределах музыкального модернизма, и в техниках тональных, причем в приемах

тоновой неповторности, как только это можно уловить на слух: каллиграфически точное серийное письмо обладает качеством выразительнейшей интонационности, свойственной скорее тональной музыке. Второй парадокс — это мерцающие в музыкальном потоке музыкальные анограммы великих имен, искусно вплетенные в звуковую ткань. Парадокс в том, что знакомые инициалы Баха и Шостаковича преобразуют атонализм в письмо с конкретикой устремленности к определенному центру. Причем центру не тональному, к которому стекаются все линии произведения, а конкретному интонационному символу, пробуждающему в слушателе вереницу образных ассоциаций. Это особенно ярко выразилось в Поэме для флейты и фортепиано, где крайне выразительная средневековая мелодия Нерсеса Шнорали окружена изысканными «инкрустациями» атонального фортепиано.

Еще один парадокс — в Виолончельной сонате нет противопоставлений, но в самой музыкальной субстанции множеству неповторных и в полном смысле неповторимых и ярко запоминающихся звуковых объектов, что означает высокое владение мастерством, когда техника письма служит средством достижения высокого художественного результата, а сами объекты — центры притяжения всего сущего, чем эти центры были окружены.

Произведения Рубена Саркисяна, сочиненные в традиционной технике — Трио, Квартет под названием “Эпилог” — парадоксально нетрадиционны. Придуманный мною для себя когда то композиторский лозунг “Ищите необычное в обычном” во всей полноте передает характер этой светло-печальной музыки “Эпилога”. И это качество музыки придает ее художественному содержанию многолетие ее востребованности как явления абсолютной художественной новизны.

Автор данной рецензии не ставит целью анализ произведений, прозвучавших в концерте — без нотного текста это выглядело бы крайним дилетантизмом. Целью является желание обобщить воедино все впечатления от прослушанной музыки, собрать их в клубок эмоций, в некий сплав чувственных, порой полярных восприятий, являющихся по сути написанным в звуковой идеопластике портретом композитора-Мыслителя, улавливающего все флюктуации Вселенских

Просторов. Но три качества музыки Рубена Саркисяна представляют собой некие общие координаты его творческих полей: свобода в выборе средств выразительности, уровень избирательности которой ничем не ограничен; интонационная точность каждой композиционной детали и математическая точность в выстраивании пропорциональной иерархии взаимодействия разномасштабных структур; и способность мышления к логически и художественно оправданному совмещению несовместимого в череде причин и следствий.

В нашей последней встрече мы с восторгом от Божьего Промысла говорили о бозонах Хигса, элементарных частицах, которые физики называли частицами Бога, самых элементарных из всех элементарнейших. И кажется Рубен Саркисян каким то непостижимым образом ощущал присутствие в нашей общей Реальности этих частиц, что приближало его к Воле Создателя и позволяло осуществлять то, что для многих других неосуществимо.

Бесконечно признателен Ирине Бадалян и Джульетте Варданян — организаторам этого концерта. Но все же самая глубокая благодарность молодым исполнителям, вдохновенно погружившимся в музыку той самой истинной красоты, которой в Море сейчас исчезающе мало. И постоянно всплывающий в памяти “листопад” страниц уже сыгранных, опадающих, подобно осенним листьям, к ногам музыкантов струнного квартета, только дополнил образную суть композиции “Эпилог” Рубена Саркисяна. Хочется добавить, что это музыкальное прощание со слушателями концерта для присутствовавшей в зале вдовы Композитора обернулось напротив новой, пусть виртуальной, но бесконечно трогательной встречей с ее супругом, творившим под знаком их неразрывного духовного единения!

МИХАИЛ КОКЖАЕВ
композитор

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

✓ Նոյեմբերի 24-ին, Երևանի Մալաթիա-Սեբաստիա շրջանի Կոնստանտին Օրբելյանի անվ. արվեստի դպրոցում կայացավ ԵՊԿ Կատարողական արվեստի պատմության և տեսության ամբիոնին կից գործող Միջառարկայական մասնագիտացման կենտրոնի և Do-Re-Meet կրթամշակութային ՀԿ-ի համատեղ ծրագրի հերթական համդիպումը՝ «Ուղևորություն Արամ Խաչատրյանի «Մանկական ալբոմի» էջերով» խորագրով:

Դաշնամուրային ցիկլի փոխադրումը ջութակի և դաշնամուրի համար նվագեցին ԵՊԿ շրջանավարտներ՝ Անի Բալյանը (ջութակ) և Տաթև Մինասյանը (դաշնամուր): Երաժիշտների կատարումը գերեց երեխաներին, նրանք տպավորված էին ու պատրաստ էին մասնակից դառնալ համերգի ինտերակտիվ բաժնին: Հանդիպումը վարեց



«Ծովաշար» քանոնահարների անսամբլ, ղեկավար՝ Ծովհնար Հովհաննիսյան

րենցի՝ կատարեց Տիգրան Շահինյանը (ազգային երգեցողություն, մագիստրոսականի 1-ին կուրս, ղեկ.՝ պրոֆ. Արգաս Ոսկանյան, Քնարիկ Տեր-Սիմոնյան դաշնամուր), «Աղաջո»՝ «Ապարտակ» բալետից, փոխադրումը՝ Նորայր Դավթյանի, կատարեց Լուսինե Տիգրանյանը (քամանչա, ղեկ.՝ պրոֆ. Նորայր Դավթյան, Էլլադա

✓ Ապրիլի 12-ին փակվել էր Արցախյան Մայր Հայաստանին կապող կյանքի ճանապարհը: Հունամիտար աղետի տարում ջազի միջազգային օրը նվագախումբը Ստեփանակերտում ներկայացավ բացօթյա մեն համերգով:

Այսօր նվագախումբը գործում է Երևանում: Նրանց են միացել նաև Երևանում ապրող երիտասարդներ: Վերջին օրերին Ուլիսանյան, MEZZO ալկոմբներում և մի քանի այլ հարթակներում ունեցած բարեգործական համերգներից հետո նվագախմբի կատարումները ղեկավարների 8-ին հնչեցին Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի Ակուստիկ լաբորատորիայում: Ծրագրում ընդգրկված էին Կոնստանտին Օրբելյանի, Վահագն Հայրապետյանի, Դավիթ Մելքոնյանի, Տիգրան Սուչյանի, Դավիթ Գեոգրայանի, Ջակո Պաստորիուսի և Քուինսի Ջոնսի ստղծագործություններից և ջազային ստանդարտներ:



Տաթև Մինասյան, Անի Բալյան, Էլենորա Հարությունյան

ԵՊԿ 2-րդ կուրսի ուսանող Էլենորա Հարությունյանը (Ակադեմիական երգեցողություն, ղեկ.՝ դոցենտ Ջ. Նազարյան): Նա ոչ միայն կատարեց Արամ Խաչատրյանի «Դիմակահանդես» ներկայացման համար գրված Նինայի արիան, այլև «Մանկական ալբոմ»-ի մասին ինտերակտիվ զրույցով, ունկնդրված երաժշտության վերաբերյալ հարցապատասխան մրցույթով, երաժշտական խաղերով երեխաներին հրավիրեց մասնակցել համերգին ոչ միայն որպես ունկնդիր, այլև՝ ակտիվ դերակատար: Ճիշտ պատասխանող աշակերտները պարգևատրվեցին հուշանվերներով:

✓ Դեկտեմբերի 8-ին, Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոնը՝ դոցենտ Մարգարիտ Ոսկանյանի ղեկավարությամբ ներկայացավ Արամ Խաչատրյանի ստեղծագործություններին նվիրված համերգով: Կատարումները կոմպոզիտորի հորելյանական տարվա նվիրումներն էին:

Հնչեցին փոխադրումներ Արամ Խաչատրյանի ստեղծագործություններից. «Պեպոյի երգ»-ը, խոսք՝ Եղիշե Չա-

Գալոյան՝ դաշնամուր) «Երգ Երևանի», խոսք՝ Աշոտ Գրաշուն՝ կատարեց Միքայել Գրիգորյանը (ազգային երգեցողություն, 3-րդ կուրս, ղեկ.՝ պրոֆ. Արգաս Ոսկանյան, Լիլիթ Ոսկանյան՝ դաշնամուր), «Օրորոցային»՝ «Գայանե» բալետից, փոխադրումը՝ քանոնի համար Կարինե Հովհաննիսյանի, կատարող Գոհար Մովսիսյանը, (քանոն, 4-րդ կուրս, ղեկ.՝ պրոֆ. Կարինե Հովհաննիսյան, Կարեն Սարգսյան՝ դաշնամուր) ջութակի Կոնցերտի 1-ին մաս, փոխադրումը՝ Սամվել Երկնափեշյանի, կատ. Անի Ռուբենյանը (բլուզ, մագ. 2-րդ կուրս, ղեկ.՝ դոց. Սամվել Երկնափեշյան, Էլլադա Գալոյան, դաշնամուր), «Սուսերով պարը», «Գայանե» բալետից՝ կատարեց «Ծովաշար» քանոնահարների անսամբլը (ղեկ.՝ պրոֆ. Ծովհնար Հովհաննիսյան, Արմեն Աղաջանյան՝ դաշնամուր):



Արցախի պետական ջազ նվագախումբ, ղեկավար՝ Տիգրան Սուչյան

Պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱՅՈՅԱՆԸ
Նյութը քաղված է <https://www.facebook.com/YerevanStateConseavatory> կայքից

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Այս քաղաքը երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն՝ Աննա Ասատրյանի «Ohanes Tchekidjian: Life and Career» մենագրությունը։ Այն նվիրված է ՀՀ ազգային հերոս, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ և Հայաստանի պետական մրցանակների դափնեկիր, Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի երկարամյա ղեկավար և գլխավոր դիրիժոր, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Հարությունի Չեքիջյանի կյանքի ուղի, կատարողական գործունեության և արվեստի համակողմանի ուսումնասիրությանը։ Աշխատության խմբագիրն է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ Պետական մրցանակի դափնեկիր, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը։ Աշխատությունը հրատարակվել է ՀՀ ԳԱԱ խմբագրական-հրատարակչական խորհրդի և ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշումներով և հրատարակվել է ՀՀ ԿԳՄՍՆ ֆինանսավորմամբ։ Այն նվիրված է Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 95-ամյակին։ Ինչպես նշել է Աննա Ասատրյանը. մորույթը. Աշխատության մեջ անգլերեն լեզվով առաջին անգամ՝

- ✓ Արդի երաժշտագիտության մեջ ներկայացվել է Հովհաննես Չեքիջյանի կյանքն ու կատարողական արվեստը։
- ✓ Բացահայտվել են Հովհաննես Չեքիջյանի խմբավարական և դիրիժորական արվեստի կատարողական առանձնահատկությունները։ Հ. Չեքիջյանն այսօր հայ կատարողական արվեստում եզակի և անգերազանցելի խմբավար է, ով նաև փայլուն դիրիժոր է։
- ✓ Հիմնավորվել է, որ Հ. Չեքիջյանի շնորհիվ որակապես նոր մակարդակի է բարձրացել երաժշտական կյանքի որակը Հայաստանում, իր գործունեությամբ նա էական նպաստ է բերել խորհրդային Միությունում խմբերգային և դիրիժորական կատարողական արվեստի զարգացմանը։ Մասնաորոն դարձել է բազմաթիվ ստեղծագործությունների առաջին ու անգերազանցելի մեկնաբանը։

- ✓ Ներկայացվել է, որ Հ. Չեքիջյանի բացառիկ ներդրումը հայ երգչախմբային արվեստի զարգացման գործում նրա շնորհիվ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբն իր կատարողական վարպետությամբ դարձել է հայկական խմբերգային արվեստի գագաթը։ Նրա ղեկավարությամբ կապելլան բնագրի լեզվով՝ 27 լեզուներով կատարել է ավելի քան 700, այդ թվում՝ խոշոր կտավի վոկալ-սիմֆոնիկ շուրջ 40 ստեղծագործություններ, որոնցից 15-ը ներկայացվել են խորհրդային Միությունում առաջին անգամ։ Հովհաննես Չեքիջյանն աշխարհին է ներկայացրել հայ երգչախմբային երաժշտությունը և երգչախմբային արվեստի բարձր մակարդակը։

- ✓ Կոմիտասի, Մակար Եկմալյանի, Քրիստափոր Կարա-Մուրզայի և այլոց խմբերգերի չեքիջյանական մեկնաբանությանը հետազոտության օրինակով բացահայտվել է Հովհաննես Չեքիջյան-խմբավարի ներդրումը հայ խմբերգային արվեստի զարգացման գործում։

- ✓ Արամ Խաչատրյանի «Չոն ցնծության» ստեղծագործության չեքիջյանական մեկնաբանությանը ուսումնասիրության օրինակով ներկայացվել է Հ. Չեքիջյանի վաստակը հայ ժամանակակից երաժշտության կատարման և հանրահռչակման գործում։

- ✓ Բացահայտվել է Հ. Չեքիջյանի՝ որպես տաղանդավոր դիրիժորի ներդրումը հայ և սովետական դիրիժորական արվեստի զարգացման գործում։ Ռոսինիի «Stabat Mater»-ի չեքիջյանական մեկնաբանությանը ուսումնասիրության օրինակով ներկայացվել է այն մեծ դերը, որ կատարել է Հ. Չեքիջյանը ԽՍՀՄ խոշոր կտավի վոկալ-սիմֆոնիկ 15 ստեղծագործությունների համամիութենական պրեմիերաների իրականացման գործում։

- ✓ Գիտական շրջանառության մեջ է դրվել այն փաստը, որ Հ. Չեքիջյանը համաշխարհային դիրիժորական պրակտիկայում միակ դիրիժորն է, ով Հ. Բեռլիոզի «Requiem»-ը կատարել է 37 անգամ։

- ✓ Լուսաբանվել են Հ. Չեքիջյանի համերգային շրջագայությունների լենինգրադյան և ֆրանսիական էջերը։

- ✓ Քննության է առնվել Հ. Չեքիջյանի գործունեությունը Երևանի Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի պե-

տական ակադեմիական թատրոնի տնօրենի պաշտոնում։

- ✓ Ուսումնասիրվել է Հ. Չեքիջյանի ստեղծագործությունը։
- ✓ Ներկայացվել է Հ. Չեքիջյանի բեղմնավոր համագործակցությունը ՀՀ ԳԱԱ-ի հետ։ ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր Հ. Չեքիջյանը ՀՀ ԳԱԱ հիմնի առաջին կատարողն է և դեռևս միակ մեկնաբանը։

- ✓ Կազմվել է և անգլերեն լեզվով ներկայացվել է Հայաստանից դուրս՝ աշխարհի տարբեր երկրների 184 քաղաքներում Հ. Չեքիջյանի ղեկավարությամբ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի կատարմամբ տեղի ունեցած 868 համերգների ցանկը, որտեղ այբբենական կարգով ներկայացված են քաղաքները և համերգների ամսաթվերը։

- ✓ Կազմվել է և անգլերեն լեզվով ներկայացվել Հ. Չեքիջյանի ղեկավարությամբ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի կատարմամբ Մոսկվայի Չայկովսկու անվ. պետական կոնսերվատորիայի համերգասրահում կայացած համերգների ծրագրերի ցանկը։

- ✓ Կազմվել է և անգլերեն լեզվով ներկայացվել Հ. Չեքիջյանի ղեկավարությամբ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի կատարմամբ Լենինգրադում կայացած համերգների ծրագրերի ցանկը։

- ✓ Կազմվել է և անգլերեն լեզվով ներկայացվել ցանկը 69 սիմֆոնիկ նվագախմբերի, որոնք ղեկավարել է Հ. Չեքիջյանը։ Նշված են համերգների ամսաթվերը, ներկայացված է տեղեկատվություն համերգների ընթացքում հնչած ստեղծագործությունների ու մենակատարների վերաբերյալ։

- ✓ Կազմվել է և անգլերեն լեզվով ներկայացվել Հ. Չեքիջյանի մասին առկա մատենագիտությունը։
- ✓ Կազմվել է և անգլերեն լեզվով ներկայացվել Հ. Չեքիջյանի փաստաթղթերի և պարգևների ցանկը։

- ✓ Գիտական շրջանառության մեջ են դրվել Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի արխիվում և Հ. Չեքիջյանի անձնական արխիվում պահվող արխիվային կարևոր վավերագրեր՝ համերգների հայտագրեր, ծրագրեր, փաստաթղթեր, համերգների վերաբերյալ ռեցենզիաներ, հայ և օտարազգի անվանի մարդկանց՝ Հ. Չեքիջյանի կատարողական գործունեության վերաբերյալ գնահատականները, ինչպես նաև բազմաթիվ լուսանկարներ և Հ. Չեքիջյանի բոլոր դիմանկարների ու դիմաքանդակների վերատպույթումները։

Գործնական նշանակությունը. Ավանայտ է աշխատության կիրառական նշանակությունը։ Ուսումնասիրության արդյունքները կարող են՝

- ✓ հուսալի հիմք դառնալ Հ. Չեքիջյանի կատարողական գործունեության հետազա ուսումնասիրությունների համար,

- ✓ ուղենիշ դառնալ հայ կատարողական արվեստի մյուս ներկայացուցիչների կատարողական արվեստի ուսումնասիրության համար,
- ✓ ընդգրկվել հայ կատարողական արվեստի պատմության բուհական դասընթացներում և օգտագործվել որպես ուսումնական ձեռնարկ ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում։

<https://www.facebook.com/profile.php?id=100013260199169>


Հրատարակվել է ԵՊԿ Ջագ-փոփ երաժշտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Նարինե Ջարիֆյանի «Դաշնամուրային տրիո»-ն։

Ստեղծագործությունը նվիրված է «Ars Lunga» ARS LUNGA piano and cello duo-NGO դուետին (Ջուլիետա Վարդանյան-դաշնամուր, Արամ Թալալյան-բավջութակ)։

Նրանք այս ստեղծագործության առաջին կատարողներն են։ Տրիոն արդեն ընդգրկվել է «Հայ կամերային երաժշտության անթոլոգիա» նախագծի 2-րդ հատորում։ Հրատարակման կազմողը և գլխավոր խմբագիրը Նարինե Ջարիֆյանն է, երաժշտական խմբագիրները՝ Ջուլիետա Վարդանյան, Նուրն Դանիելյան։ Ստեղծագործությունը կարևոր համալրում է ուսումնառության և համերգային նվագախմբի համար։ Տրիոյի այս հրատարակմանը կցված են նաև ջութակի ու թավջութակի նվագամասերը։



Լույս է տեսել «Memories of Yerevan» պատկերազարդ գիրքը, որտեղ պատմվում է մայրաքաղաքի դարավոր պատ-



մության, հարուստ ժառանգության և ավանդույթների մասին։ Նախագծի իրագործման նախաձեռնության շուրջ համախմբված ժողովուրդը պատմական էքսկուրս կատարեց դեպի հայոց պատմության ամենահին ժամանակները՝ Արարատյան երկրի շրջանը, որպեսզի կարողանան ներկայացնել Երևանի ոգին։ 301 թվականին Հայաստանն առաջին երկիրն էր, որն ընդունեց քրիստոնեությունը որպես պաշտոնական կրոն։

Memories of Yerevan-ը մանրամասն նկարագրում է երկրի կրոնական կյանքը՝ երևացող նրա եզակի եկեղեցիների և գրավոր ժառանգության միջոցով, ներառյալ թանկարժեք փաստաթղթերը, որոնք պահվում են Երևանի Մատենադարանում՝ հայկական ձեռագրերի աշխարհի ամենամեծ շտեմարանում։ Ինչպես նաև հնագույն պատմությունը, գիրքն ուսումնասիրում է XX դարասկզբի առանցքային շրջանը, երբ Երևանը դարձավ Հայաստանի մայրաքաղաքը, և երկիրն ունեցավ զաղութատիրությունից անկախության կարճ ժամանակաշրջան։

1920 թ. կազմավորվել է ՀԽՍՀ։ «Memories of Yerevan»-ն արձանագրում է այն փոփոխությունները, որոնք այն ժամանակ տեղի ունեցան քաղաքում, ներառյալ վաղ խորհրդային եզակի շենքերի ստեղծումը և դրանք նախագծող երևանաբնակ ճարտարապետների պատմությունները։ Գիրքը համախմբել է 20 հեղինակի, որոնցից յուրաքանչյուրն իր բնագավառի մասնագետ է։ Գրքի վրա երկու տարի աշխատելուց հետո հեղինակների թիվը փաստում է, որ նախագիծը հաջողվել է։ Նախաձեռնության հեղինակը Կրիֆեստր Արմեն Դարբինյանն է, հրատարակիչը՝ Նիկոլաս Իլչինեն, ամողջ գործընթացը համակարգել է Էռնա Ռազզովան, հրատարակությանն աջակցել է Երևանի քաղաքապետարանը։

Արմեն Դարբինյանը նշել է. «Գիրքը սիրո մասին է, քանի որ Երևանը սիրո քաղաք է, Երևանը ստեղծվել և կառուցվել է սիրով և սիրով։ Եվ բոլոր նրանք, ովքեր նպաստել են այս գրքի ստեղծմանն ու հրատարակմանը, միավորվել են այդ սիրով և ոգեշնչվել Երևանով»։ Գրքում բազմաթիվ հոդվածների թվում գտնվում են նաև երաժշտագետների, ԵՊԿ պրոֆեսոր՝ Արմեն Բուդաղյանի «Music and concerts in Yerevan, 1920s and 1930s» և դասախոս Մարիաննա Տիգրանյանի «Three branches of Armenian music» հոդվածները։ Գիրքը պատրաստվել է հրատարակության Պրագայում, «Artguide» հրատարակչությունում, տպագրվել՝ Լատվիայում։

Նյութը պատրաստեց՝ ԱՐԽԻՆԵ ԱՌՅԱՆԸ

Նոյեմբերի վերջին SpaceX-ի Falcon 9 իրթիռը թռավ տիեզերք՝ իր հետ տանելով Հայաստանում ստեղծված առաջին արբանյակը՝ Հայասաթ-1-ը։ Հայկական առաջին արբանյակը ստեղծվել է «Բազումբ» տիեզերական հետազոտությունների լաբորատորիայի և համագործակցության արդյունքում։

«Գիտական նորարարության և կրթության կենտրոն» (CSIE).

«Բազումբ»-ի համա-հիմնադիր Ավետիք Գրիգորյանի խոսքով, «Հայասաթ-1»-ն արդեն ֆունկցիոնալ և այլ ստուգումներ է անցել Եվրոպայում, այժմ այն բերվել էր նախաթռիչքային վիճակի և հատուկ սարքով սպասում էր թռիչքին։

Տիեզերք հասնելուն պես «Հայասաթ-1» արբանյակը ծայնային ազդանշանների տեսքով երկիր պետք է ուղարկեր Կոմիտասի «Կաթավիկ» երգի կրկներգի մեղեդին։

«Սիրունիկ, սիրունիկ, Սիրունիկ, նախշուն կաթավիկ»

Այս նախագծին զուգահեռ հետազոտողներն սկսել են քննարկումներ հաջորդ, ավելի բարդ արբանյակի ֆունկցիոնալության վերաբերյալ, այսինքն, թե որն է լինելու հաջորդ ծրագիրը, ինչպիսի ուղղումներ են լինելու և ինչ նոր գործառնություններ և հնարավորություններ է ունենալու արբանյակի հաջորդ տարբերակը։ Ավելում է, որ հաջորդ արբանյակը կլինի ավելի մեծ և շատ ավելի առաջադեմ։

<https://twitter.com/vermedianetwork/status/1715797259231604833>

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆԱՑՆՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՌԶ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Վկայական N 03Ա059505 տրված 7.04.2003թ.

ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈԱԿ

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԱՅՅԱՆ, ԳՈՐԶՈՐ ՇԱԳՈՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝ ԱՐԽԻՆԵ ԱՌՅԱՆԸ

Թողարկման պատասխանատու

և խմբագիր՝ ԳՈՐԶՈՐ ՇԱԳՈՅԱՆ

Խմբագիր՝ ՍՈՒՑ ԱԶՆԱՌԻՐՅԱՆ (ռուս. լեզու)

Գեղարվեստական խմբագիր՝ ԳՈՐԶՈՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ։ Խմբագրությունը միշտ չէ, որ համաժողով է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին։

Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում։

Ծավալը 16 էջ։ Ստորագրված է 25.12.2023:

Գինը 200 դրամ։ Տպաքանակը՝ 101:

Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է բացառապես «Երաժիշտ» ամսաթերթի «ԵՊԿ հրատարակչությանը» (conservatory.am): Այլ ձևով-ներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը ամբողջական վերահրապարակելու համար անհրաժեշտ է «ԵՊԿ հրատարակչության» (conservatory.am) համաձայնությունը։ Լրատվամիջոցները կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեջբերումներ վերահրապարակել միմիայն հատվածաբար՝ պարտադիր օգտագործելով հիպերհղում։

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրությունը նշված հասցեով.

0001, ք. Երևան, Մարկ Գրիգորյան 2
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
<http://www.conservatory.am>,
E-mail: yerazhisht@gmail.com

<https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-Yerevan-State-Conservatory-996490150508214/>

